

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԸ

Նոր խորհրդարան, Նոր Կառավարութիւն, Նոյն Մարտահրաւերները

Այս շաբաթ Հայաստան թեւակոխեց նոր շրջան՝ նոր խորհրդարանով ու նոր կառավարութեամբ: Յունիս 20-ի ընտրութիւններուն արդիւնքներով, խորհրդարանական մեծամասնութեան վարչապետի թեկնածուն՝ Նիկոլ Փաշինեան, Սահմանադրութեան պահանջներուն համաձայն, նախագահ Արմէն Սարգսեանի կողմէ նշանակուեցաւ վարչապետ: Նոր կառավարութեան կազմը արդէն իսկ սկսած է ձեւ ստանալ՝ նկատելի փոփոխութիւններով: Նախկին կառավարութեան ու իշխող կուսակցութեան կարգ մը կարկառուն դէմքերը, որոնք Փաշինեանի կողքին եղած էին Թաւաշայ Յեղափոխութենէն առաջ, ընթացքին ու անկէ ետք, իրենց տեղերը սկսած են զիջիլ նոր նշանակուած նախարարներու, որոնց ուսերուն պիտի իյնայ պատերազմէն յետոյ վերականգնումի ծանր գործը:

Կառավարութեան զուգահեռ՝ նկատելի փոփոխութիւններու ենթարկուեցաւ Ազգային ժողովը: Որպէս օրէնսդիր մարմնի նախագահ, Արարատ Միրզոյեանին եկաւ փոխարինելու Ալան Սիմոնեանը, որու առաջին պարտականութիւններէն մէկը եղաւ խորհրդարանի շէնքէն ներս ապահովութեան խիստ միջոցառումներու հաստատումը: Սիմոնեան առանց թաքցնելու յայտարարեց, որ ապահովութեան յաւելեալ միջոցներու կիրառումը կը կատարուի կանխելու համար 1999 թուական Յոկտեմբեր 27-ին խորհրդարանէն ներս տեղի ունեցած սպանդի կրկնութիւնը ու նկատի առնելով նոր խորհրդարան մուտք գործած շարք մը պատգամաւորներու ոչ հեռու անցեալի վարքագիծը, երբ վարչապետի սպանութեան կոչերով հանդէս կու գային յետպա-

Շար.ը էջ 5

**«ՄԱՍԻՍ»
ՏԱՐԵԿԱՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴԸ**

Տարեկան արծակուրդի բերումով «Մասիս» լոյս չի տեսներ Օգոստոսի երկրորդ եւ երրորդ շաբաթները:

Մեր յառաջիկայ թիւը լոյս պիտի տեսնէ թուակիր՝ Շաբաթ, Օգոստոս 28-ին:

Այս ընթացքին կը շարունակէ գործել համացանցային Massispost.com մեր կայքէջը, Անգլերէն եւ Հայերէն բաժիններով:


Նորընտիր Ազգային ժողովը Սկսաւ Աշխատանքները Ալան Սիմոնեան Դարձաւ Խորհրդարանի Նախագահ Նիկոլ Փաշինեան Նշանակուեցաւ Վարչապետ

Օգոստոս 2-ին մեկնարկեց Հայաստանի 8-րդ գումարման Ազգային ժողովի աշխատանքները: Մինչեւ խորհրդարանի ղեկավարութեան ընտրութիւնը նիստը կը վարէր ամենատարեց պատգամաւոր՝ ազգութեամբ Եգիպտի Կնեազ Հասանովը:

Խորհրդարանի առաջին նստաշրջանը սկսաւ տէրուական աղօթքով, զոր հնչեցուց Ամենայն Հայոց կաթողիկոս՝ Գարեգին Երկրորդը:

Կաթողիկոսը նախ շնորհաւորեց պատգամաւորները, ապա շեշտեց, որ այսօր Հայաստանն ու Արցախը կը դիմակայեն արտաքին եւ ներքին լուրջ մարտահրաւերներ՝ յանդիման Ատրպէյճանի կողմէ ծաւալուող յարձակողական ու ծաւալապաշտական նկրտումներուն, իսկ հայրենական կեանքին մէջ ծառայած հիմնախնդիրները չաղթահարելու համար հրամայական է պետական քաղաքական գործիչներու եւ ողջ հասարակութեան համախմբումը, քաղաքացիական պատասխանատուութեան բարձր գիտակցութիւնը, համընդհանուր զգաստութիւնն ու բարեխղճութիւնը:

Ապա նախագահ Արմէն Սարգսեան առաջին նիստի աւթով շնորհաւորեց խորհրդարան անցած



Նոր Ազգային ժողովի բացման նիստը վարող Կնեազ Հասանով՝ կողքին Նախագահ Արմէն Սարգսեան եւ Վեհափառ Գարեգին Բ.

պատգամաւորները եւ մաղթեց չաջողութիւն եւ արդիւնաւէտ աշխատանք:

«Ձեզ հնարաւորութիւն է ընձեռուել նախ մշակել, ապա իրականացնել ապագային միտուած իրական, ռազմավարական ծրագրեր: Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներն ակնկալում են, որ կը գտնուեն առկայ խնդիրների լուծումները եւ կը դրսևորուի կամք՝ Հայաստանն ուղղորդե-

լու դէպի զարգացում, դէպի ապագայ: Այդ ապագան պէտք է կերտուի ուժեղ, հաւասարակշռուած եւ առաջադէմ պետութեան տեսլականի շուրջ: Ապագան առանձին վերցրած մեզինց որեւէ մէկի կամ առանձին կուսակցութեան շահերը չեն, ապագան մենք ենք՝ որպէս մէկ ամբողջութիւն», - ըսաւ նախագահը:

Պէտք է ամէն ինչ ընել՝ պաշտ-

Շար.ը էջ 5

Հայաստան Տիրացաւ Երկու Արծաթ Եւ Մէկ Պրոնզ Ողիմպիական Մետալներու



Թոքիո 2020-ի Ողիմպիական խաղերու արծաթ մետալակիր ծանրամարտիկ՝ Սիմոն Մարտիրոսեան

Ճափոնի մէջ ընթացող Թոքիո 2020-ի Ողիմպիական խաղերուն, Հայաստանի համար ամենասպասուած՝ 11-րդ օրը Հայաստանի հաւաքականէն ոսկիի յաւակնող երկու մարզիկները՝ ըմբշամարտիկ՝ Արթուր Ալեքսանեանն ու ծանրամարտիկ՝ Սիմոն Մարտիրոսեանը չկրցան հասնիլ ամենաբարձր արդիւնքին ու բաւարարուեցան արծաթէ մետալներով:

Ռիոյի Ողիմպիական խաղերու ախոյեան, 97 քիլոկրամ ծանրութեան յունահունական ոճի ըմբշամարտիկ՝ Արթուր Ալեքսանեան եզրափակիչին 5:1 հաշիւով զիջեցաւ Ռուսաստանի Ողիմպիական կոմիտէին ներկայացնող՝ Մուսա Եվլոնեին: Արծաթէ մետալի արժանացած Ալեքսանեանը վնասուած-

Շար.ը էջ 16

Ֆրանսա Հայաստանին Նուիրած Է 200 Հազար Չափաբաժին Պատուաստ

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը հեռախօսազրոյց ունեցած է Ֆրանսայի նախագահ՝ Էմանուէլ Մաքրոնի հետ, յայտնած է վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնը:

Ֆրանսայի նախագահը Նիկոլ Փաշինեանը շնորհաւորելով վարչապետի պաշտօնին նշանակուելու կապակցութեամբ՝ յայտնած է Հայաստանին 200 հազար չափաբաժին պատուաստ տրամադրելու որոշման մասին:

«ՀՀ վարչապետը տեղեկատուութիւն է տրամադրել Ատրպէյճանի կողմից սահմանային վերջին սաղրանքների, ինչպէս նաեւ Ատրպէյճանի յարձակողական հուստորաբանութեան վերաբերեալ՝ ընդգծելով, որ դրանց նպատակն է ապակայունացնել իրավիճակը տարածաշրջանում», - ըսուած է Հայաստանի կառավարութեան տարածած հաղորդագրութեան մէջ:

Փաշինեան անթոյլատրելի հա-

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՆ

Հասանովի Պահանջը Հայկական Ձիմուժի Ատամը Զգալուց Յետոյ

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Հասանովը ընդլայնուած խորհրդակցութիւն է ունեցել բանակի հրամկազմի հետ, պահանջելով ընդգծուած ուշադրութեամբ հետեւել պատրաստածութեանն ու մարտունակութեանը: Հասանովը, ըստ պաշտօնական հաղորդագրութեան, չորրորդը է պատրաստ լինել հայկական կողմի սադրանքները կանխելուն: Հասանովի այդ խորհրդակցութիւնն ու պաշտօնական հաղորդագրութեան ձեւակերպումները թոյլ են տալիս մտածել նուազագոյնը երկու էական հանգամանքի մասին: Նախ, հայկական կողմի ցանկացած սադրանք կանխելու պատրաստ լինելու մասին նրա հրահանգը չափազանց զգոնութիւն պէտք է թելադրի հայկական կողմին, հայ-ատրպէյճանական սահմանի ամբողջ երկայնքով: Հասանովի խորհրդակցութիւնն ու հրահանգը իրականում հենց հայկական կողմի համար պէտք է լինի ցուցում՝ պատրաստ լինել ատրպէյճանական սադրանքների, սահմանի ցանկացած կէտում, որովհետեւ, երբ ատրպէյճանական կողմը խօսում է հայկական սադրանքի պատրաստ լինելու մասին, դա այլ բան չէ, քան հայկական կողմի դէմ սադրանքի պատրաստուելու հրահանգ: Իսկ, որ Ատրպէյճանն այդ կերպ է պատկերացնում Հայաստանին իր օրակարգը թելադրելը, այլևս որեւէ մէկի համար զաղտնիք չէ: Միւս հանգամանքը, որ Հասանովի խորհրդակցութեան համատեքստում արժանի է ուշադրութեան, պահանջն է ատրպէյճանական զինուժի մարտունակութեան առումով: Թուում է, որ այսպէս կոչուած յաղթող զինուժում այդպիսի պահանջի անհրաժեշտութիւնն պէտք է որ չլինի, առնուազն՝ պահանջի ձեւակերպման: Սակայն ուշադրութեան է արժանի այն, որ Հասանովի լայն խորհրդակցութիւնը եւ հրահանգներն ու պահանջները յաջորդում են Գեղարքունիքի եւ Երասխի ուղղութեամբ առաջխաղացման ատրպէյճանական փորձերին, որոնք փաստօրէն յետպատերազմեան այս ամիսներին առաջին անգամ բխուել են հայկական պաշտպանական

կողմ դիմադրութեան, չունենալով որեւէ յաջողութիւն եւ տալով կորուստներ: Ատրպէյճանը սահմանային մարտերի փուլում կարող է մնալ մենակ, ուղղակի հովանաւոր էրտողանը ներկայումս գերգերազանց է մի կողմից միջինասիական հեռանկարով, միւս կողմից հրդեհների խնդրով երկրի ներսում: Միաժամանակ, սահմանային մարտերի առումով Ատրպէյճանը ունի որոշակի սահմանափակուածութիւն, նկատի ունենալով այն, որ մի քանի կմ հարցում Պաքուն չի արժանանում Մոսկուայի դիմադրութեանը, սակայն աւելի լայն մասշտաբի պարագայում Հայաստանի տարածքի առումով լուրջ ՌԴ համար կը դառնայ ուղղակի ճակատագրական: Հետեւաբար, Ատրպէյճանը չունի սահմանային մարտերի մասշտաբը շատ ընդլայնելու եւ այդպիսով իր ուղղափոխութիւնն առաւելութիւնը զգալիօրէն գործի դնելու էական նարաւորութիւն: Իսկ լոկալ առումով, հայկական զինուժը կարծես թէ աստիճանաբար վերականգնում է իր շարքերն ու մարտունակութիւնը, մեղմ ասած խնդիրներ առաջացնելով Ատրպէյճանի համար եւ յատկանշական է Գեղարքունիքի դէպքերից յետոյ Հասանովի լայն խորհրդակցութիւնը եւ մարտունակութեան պահանջը իր հրամանատարներին: Այդ հանգամանքը սակայն դարձեալ՝ հայկական կողմի համար ոչ թէ հանգստանալու, այլ հակառակը՝ դիմադրունակութեան, բանակի պատրաստուածութեան մակարդակը էլ աւելի բարձրացնելու, կազմակերպութեան եւ հագեցածութեան աստիճանը էլ աւելի բարձրացնելու եւ զգոնութիւնը մեծացնելու հիմք է: Չի կարող լինել ոչ մի բաւարարութեան եւ զգոնութեան թուլացում: Անելիքը չափազանց շատ է եւ պատերազմից յետոյ դիմադրունակութեան վերականգնման հարցում առաջին յաջողութիւնը չպէտք է բերի պաթոսի հերթական ալիքի, այլ պարտադրի յամառ եւ լուռ աշխատանքի շարունակութիւն, որի վրայ իհարկէ պէտք է կառուցուի նաեւ քաղաքական-դիւանագիտական աշխատանքը: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ո՞ր Պահից Աշխարհը Սկսեց Հայերին Չսիրել

ՍԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում գերիշխող աշխարհաքաղաքական վերլուծութիւններն ի վերջոյ հանգում են մի բաւականին պարզունակ հարցադրման՝ Ռուսաստանը մեզ չօգնեց, տեսնես գոնէ Ֆրանսսան կամ ԱՄՆ-ը կ'օգնե՞ն, թէ՞ ամբողջ աշխարհն է մեր դէմ: Ընդ որում՝ սա քննարկում են նաեւ մարդիկ, որոնք քարտեզի վրայ Ֆրանսայի ու ԱՄՆ-ի տեղն էլ գիտեն, համաշխարհային պատմութեանն էլ են ծանօթ, ՄԱԿ-ի կանոնադրութիւնն էլ գիտեն, Եւրոպական կոնցերտի մասին էլ են լսել, մի խօսքով՝ գրագէտ, կարդացած մարդիկ են: Բայց այդ նոյն մարդկանց մեծամասնութիւնը համառօրէն չի ուզում վերլուծել ու հասկանալ, թէ ինչու աշխարհը մեզ չի օգնում, եւ յատկապէս ո՞ր պահից սկսեց չօգնել՝ այնպէս, ինչպէս մենք էինք պատկերացնում այդ օգնութիւնը: Պատկերացրէք՝ մէկը, ճիւղին նստած, ինքնամոռաց սղոցում է այդ նոյն ճիւղը եւ միաժամանակ անիծում հայի բախտն ու ամբողջ աշխարհից օգնութիւն խնդրում: Ի՞նչ օգնութիւն է ակնկալում այդ մարդը, որ իրեն աւելի սուր սղոց տան, թէ՞ բարձրանան ծառն ու մի քիչ էլ իրենք սղոցեն: Իսկ ներքեւում կանգնածները, որպէս օգնութիւն, անընդհատ խորհուրդ են տալիս չսղոցել ճիւղը, մանրամասն բացատրում են հետեւանքները, եւ այլն: Հիմա, երբ հասարակական-քաղաքական շրջանակներն իմաստուն վերլուծութիւններով արձանագրում են, որ աշխարհում որեւէ մէկը չի ուզում օգնել մեզ, գոնէ հասկանալով են, որ այդ նոյն մեր չուզողները 25 տարի շարունակ փորձել են օգնել մեզ՝ բացատրելով, որ Ղարաբաղի հարցում ստատուս-քոնոյի պահպանումն անընդունելի է եւ բացառուած, որ Արցախի կարգավիճակը քննարկել կարելի է, բայց ազատագրութեամբ տարածքները վերադարձնելն անխուսափելի է, եւ եթէ համառենք՝ վաղ թէ ուշ յայտնուելու ենք այն վիճակում, որում յայտնուել ենք: Բայց մենք 25 տարի շարունակ այդ օգնութիւնն ընկալել ենք որպէս թշնամանքի ու հայերին չսիրելու անհերքելի ապացոյց: Արդիւնքում ճիւղը մինչեւ վերջ սղոցել ենք, բնականաբար՝ թրմփացել ենք գետնին, ներքեւում կանգնածներին, հասկանալի է, հայհոյում ենք ամենավերջին խօսքերով ու միաժամանակ օգնութիւն ենք ակնկալում: Բայց՝ ոչ բոլոր օգնութիւն: Պահանջում ենք, որ մեզ օգնեն բարձրանալ յաջորդ ճիւղին ու մի լաւ սուր սղոց տան: Ընդ որում՝ մեզ հիմա էլ են բացատրում, որ դա սխալ է, որ մեզ այդ օգնութիւնը չեն տալու, որ դա ոչ մի տեղ չտանող ճանապարհ է, որ արդիւնքը լինելու է նոյնը, եւ դա՛ ոչ թէ այն պատճառով, որ հայերին չեն սիրում, այլ որովհետեւ մենք համառօրէն դէմ ենք գնում աշխարհում ընդունուած նորմերին: Բայց՝ չէ. մենք մեր վարքագիծը չենք փոխում, եւ վերջը: Իսկ այն ժամանակ, երբ մենք շարժուում էինք աշխարհում ընդունուած նորմերով, աշխարհը լաւ էլ օգնում էր մեզ: Աշխարհը մեզ

օգնում էր, երբ Ղարաբաղն ինքնորոշման հարց բարձրացրեց, աշխարհը մեզ հասկանում էր, որովհետեւ Ղարաբաղն ինքնապաշտպանուում էր, դրա համար էլ այդ ինքնորոշման իրաւունքը գէշքի ուժով ոչնչացնել փորձող Ատրպէյճանն ազրեսոր էր համարում, եւ այլն: Աշխարհը մեզ սկսեց չհասկանալ այն պահից, երբ մեր պաշտօնական քաղաքականութեան հիմքում դրուեց այն պնդումը, թէ միայն Արցախի ինքնորոշումը մեզ քիչ է, պիտի անվտանգութեան գօտին էլ հետը ինքնորոշուի, իսկ հակամարտութեան կողմերը Հայաստանն ու Ատրպէյճանն են: Չգիտես ինչու՝ այդ պահից սկսած հայերին չեն սիրում: Այսօրուայ իշխանութիւններին էլ, քանի որ, մեղմ ասած, ինտելեկտով չեն փայլում, թուացել է, թէ այն ժամանակ աշխարհը մեզ հասկանում էր ոչ թէ այն պատճառով, որ մեր առջեւ հասկանալի խնդիրներ էինք դրել, այլ որովհետեւ ժողովրդավարութեան կղզեակ էինք, հետեւաբար՝ թաւշեայ լեղափոխութիւնը բաւական է, որ աշխարհը նորից մեր կողքին լինի: Ու հիմա երեւի շատ են զարմանում, որ Հայաստանին օգնութեան ձեռք մեկնող չկայ: Առանց հասկանալու, որ եթէ ինքը քո անելիքը չես ձեւակերպում՝ օգնութեան ակնկալիք ունենալն առնուազն տխմարութիւն է: «ՉՈՐՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Սերժ Սարգսեանի Թիմը՝ Եւրոպական, Քոչարեանի Թիմը՝ Ռուսական Հարթակներում

ՍԱՐԻԱՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Մամուլն արդէն անդրադարձել է Յուլիսի 28-ին տեղի ունեցած ՀՀԿ գործադիր մարմնի նիստին: Տարածուած հաղորդագրութեան համաձայն՝ նիստը վարել է ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսեանը: Պաշտօնական հաղորդագրութեան մէջ նաեւ նշուում է, որ նիստի ընթացքում քննարկուել է Հայաստանի արեւելեան սահմաններին, ինչպէս նաեւ նախիջեւանեան հատուածում ստեղծուած իրավիճակը: Յանձնարարուել է պատշաճ կերպով իրազեկել կուսակցութեան միջազգային գործընկերներին տարածաշրջանային լարուածութեան կտրուկ աճի եւ ատրպէյճանական զինուած ուժերի կողմից սանձա-

գերծուած ուղղակի գործողութիւնների վերաբերեալ: Վերջին յանձնարարականի հետ կապուած ուշադրաւ մանրամասներ են յայտնի դարձել: Սերժ Սարգսեանն իր թիմակիցներին յանձնարարել է նաեւ ամէնուր՝ թէ՛ խորհրդարանում, թէ՛ հարցազրոյցներում եւ թէ՛ յատկապէս միջազգային գործընկերների մօտ վարկաբեկել իշխանութիւնների վարած արտաքին քաղաքականութիւնը եւ չի շեղել, որ միայն Սերժ Սարգսեանին է յաջողուել վարել կոմպլեքսներտար արտաքին քաղաքականութիւն: Ինչպէս յայտնի է՝ Հանրապետական կուսակցութիւնը ԵժԿ ան-



ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱՋԱՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Սկսած է Ձեւաւորուիլ Հայաստանի Նոր Կառավարութեան Կազմը



Փոխվարչապետ՝ Սիեր Գրիգորեան



Արղարաղատութեան նախարար Կարէն Անդրեասեան

Ազգային ժողովի կազմաւորման գլուխահարկը կը ձեւաւորուի նաեւ կառավարութիւնը: Նախագահ՝ Արմէն Սարգսեանի Օգոստոս 3-ի հրամանագիրով՝ Մհեր Գրիգորեան նշանակուեցաւ փոխվարչապետ:

Նախագահը նաեւ նախարարներ նշանակելու մասին հրամանագիրներ ստորագրած է: Այսպիսով Կարէն Անդրեասեան նշանակուեցաւ արդարադատութեան նախարար եւ Տիգրան Խաչատրեանը՝ Ելեւմուտքի նախարար: Արդարադատութեան նախկին նախարարը, ապա՝ պաշտօնակատարը Ռուստամ Բաղասեանն էր, Ելեւմուտքինը՝ Ատոմ Ճանճուկեանը:

Վերստին նշանակուեցան նոյն պաշտօններուն, Տնտեսութեան նա-

խարար Վահան Քերոբեանը, կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ սփորթի նախարար՝ Վահրամ Դումանեանը, արտակարգ իրավիճակներու նախարար՝ Անդրանիկ Փիլոյեանը, առողջապահութեան նախարար Անահիտ Աւանեսեանը:

Վարչապետ Փաշինեանի առաջարկով Սուրէն Պապիկեան նշանակուեցաւ փոխվարչապետ, Արշակ Կարապետեանը՝ պաշտպանութեան նախարար, Գեղարքունիքի արդէն նախկին մարզպետ Գնել Սանտսեանը՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցութեան նախարար, Ռոմանոս Պետրոսեանը՝ շրջակայ միջավայրի նախարար, Նարեկ Մկրտչեանը՝ Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար:

Արտասահմանէն Հայաստան Դրամական Փոխանցումները Աճած Են 37 Տոկոսով

Այս տարուայ առաջին հինգ ամիսներուն արտասահմանէն Հայաստան ուղարկուած է մօտ 748 միլիոն տոլար գումար, մինչդեռ նախորդ տարի նոյն այս ժամանակամիջոցին այդ գումարի չափը կազմած է 546 միլիոն տոլար, նշուած է Կեդրոնական դրամատան տուեալներու մէջ: Ընդհանուր առմամբ, Հայաստան ուղարկուած նիւթական փոխանցումները աճած են շուրջ 37 տոկոսով:

Տնտեսագէտ՝ Վարդան Բոստանճեան «Ազատութիւն»-ի հետ զրոյցին նշեց, որ աճած փոխանցումները կ'արտացոլեն արտասահման աշխատող հայերու եկամուտներու յաւելումը:

«Կառուցուածքային առումով, ինչպէս Ռուսաստանում, այնպէս էլ արեւմուտքում, մասնաւորապէս, Միացեալ Նահանգներում, այս իրադարձութիւններէն յետոյ արտագաղթի երեւոյթն աւելի ցցունացաւ, եւ այն մարդիկ, որ յայտնուեցին Հայաստանի սահմաններէն դուրս, չէին կարող պարապ նստել, պէտք է փնտռէին աշխատանք, գտնէին եկամուտ, ինչը արեցին», - ըսաւ Բոստանճեանը:

Այս տարուայ ցուցանիշները ուշագրաւ են անով, որ նշուած աճի գրեթէ կէսը ապահոված են Ամերիկայի Միացեալ Նահանգներ բնակող գաղթականները, քանի որ այս տարի կրկնապատկուած է Միացեալ Նահանգներէն Հայաստան եկող գումարի չափը՝ հասնելով 212 միլիոն տոլարի:

Տնտեսագէտի կարծիքով՝ փոխանցումներու ծաւալներու մեծ-

նալուն մէջ դեր խաղցած է նաեւ Ամերիկայի կառավարութեան կողմէ համավարակի ընթացքին յատկացուած ֆինանսական աջակցութիւնը, ինչ որ հնարաւորութիւն տուած է աւելի շատ գումար ուղարկել Հայաստան: Այս տեսակէտը կը պաշտպանեն նաեւ Կեդրոնական դրամատունէն, որու նախագահը դեռ երկու ամիս առաջ լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսած էր:

Ի հակառակ Միացեալ Նահանգներէն փոխանցումներու աճին, կը շարունակուի նուազիւ Ռուսաստանէն ուղարկուող գումարը, այդ դուրսնադերձ, Հայաստանի համար փոխանցումներու ամենամեծ աղբիւրը տակաւին կը մնայ Ռուսաստանը: Այս տարուայ առաջին 5 ամիսներուն Ռուսաստանէն ստացուած է 290 միլիոն տոլար:

Տնտեսագէտները չեն բացառեր, որ փոխանցումները կը շարունակուին աճիլ բոլոր երկիրներէն՝ պայմանաւորուած համավարակէն յետոյ նոր սահմաններու բացումով, ինչ որ Հայաստանի տնտեսութեան համար կարեւոր նշանակութիւն ունի:

Տնտեսագէտները Հայաստան ուղարկուող փոխանցումներու կարեւորութիւնը կը համեմատեն, օրինակ, արաբական երկիրներու նաւթի ու կազի հետ: Հայաստանի նման փոքր երկրի մը համար փոխանցումները չափազանց կարեւոր ու էական նշանակութիւն ունին, ըսած է Բոստանճեան:

Աճող փոխանցումները պէտք է դրական ազդեցութիւն ունենան

«Հայաստան» Դաշինքը Կը Պահանջէ Կալանաւորուած Պատգամաւորներու Ազատ Արձակուոյնը



Ընդդիմադիր պատգամաւորները ԱԶգային ժողովի նիստին՝ Սիւնիքի մարզի կալանաւորուած համայնքապետներու նկարներով շապիկներ հագած

Հայաստանի 8-րդ գումարման Ազգային ժողովի աշխատանքներու սկզբնաւորութեան, «Հայաստան» դաշինքը պահանջեց ապահովել նիստին Մեղրիի եւ Սիսիանի նախկին համայնքապետեր՝ Միւթար Զաքարեանի եւ Արթուր Սարգսեանի մասնակցութիւնը, որոնք կալանաւորուած են քրէական գործերով, սակայն պատգամաւոր ընտրուած են Դաշինքի ցուցակով:

Ընդդիմադիր պատգամաւորներու նիստին եկած էին Սիւնիքի մարզի կալանաւորուած համայնքապետերու նկարներով շապիկներ հագած:

«Այո՛, պատգամաւորն ունի անձեռնմխելիութեան իրաւունք, որը պէտք է յաղթահարուի, բայց

տուեալ պարագայում մենք գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ արարքները, որոնք վերագրուած են պատգամաւորական մանտաթ ստացած անձանց, տեղի է ունեցել մինչեւ մանտաթ ստանալը եւ նրանց անձեռնմխելիութիւնը յաղթահարուել է Կեդրոնական ընտրական յանձնաժողովի համապատասխան որոշումներով: Ազգային ժողովը որեւէ ձեւով չի կարող ազդել արդարադատութեան համակարգի որոշման վրայ», - արձագանգեց «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան պատգամաւոր՝ Վլատիմիր Վարդանեանը՝ առաջարկելով հնարաւորութիւն ընձեռել նախագահողին ձեւաւորել ԱԺ-ի մարմինները, յետոյ անցնիլ առօրեայ գործունէութեան հարցերուն:

Արթուր Վանեցեան.

Եթէ Ինչ-Որ Մէկուն Կը Թուայ, Թէ Պէտք Է Գանք Այստեղ Ու Բնականոն Ընթացքով Աշխատինք, Ապա Կը Սխալին

ՀՀ ԱԺ-ի «Պատիւ Ունեմ» խմբակցութեան ղեկավար՝ Արթուր Վանեցեան լրագրողներու հետ զրոյցին նշեց, որ խորհրդարան գալով չեն հրաժարած իրենց հիմնական պահանջէն, այն է, որ իշխանութիւնները մէկ վայրկեան առաջ հեռացնել:

«Ազգային ժողովը լրացուցիչ հարթակ է, լրացուցիչ գործիք է, որը մենք օգտագործելու ենք մեր հիմնական նպատակին հասնելու համար: Եթէ ինչ-որ մէկին թւում է, թէ պէտք է գանք այստեղ ու բնականոն ընթացքով աշխատենք, ապա սխալում են: Մեր երկիրը չի գտնուում նորմալ վիճակում:

Ընդդիմութիւնն անում է այն, ինչի գործիքակազմ ունի: Երկրի անվտանգութեան պատասխանատուն իշխանութիւնն է, եւ եթէ այն չի կարողանում ապահովել երկրի անվտանգութիւնը, ապա ազնուօրէն դա պէտք է խոստովանի ու հեռանայ», - ըսաւ Արթուր Վանեցեանը:

Հարցին, թէ ինչպէս «Պատիւ ունեմ»-ը կը պատկերացնէ խորհր-



«Պատիւ Ունեմ» խմբակցութեան ղեկավար՝ Արթուր Վանեցեան

դարանէն ներս համագործակցութիւնը իշխող ուժին հետ, Արթուր Վանեցեանը նշեց, որ եթէ ԱԺ բերուի օրինագիծ, որ կը բխի Հայաստանի ժողովրդի շահերէն, ապա պատրաստ են եւ պարտաւոր են համագործակցիլ ու կողմ քուէարկել: Այլ որեւէ տարբերակով «Պատիւ ունեմ»-ը իշխանութիւններու հետ համագործակցութիւնը հնարաւոր չի համարեր:

արժեւորման վրայ: Այս տարուայ առաջին կիսամեակին դրամը ԱՄՆ տոլարի նկատմամբ արժեւորուած է 5,3 տոկոսով, իսկ Յուլիսին՝ 3 տոկոսով:

նաեւ տնտեսական ցուցանիշներուն վրայ՝ ինքնուրուի սպառողական ծախսերը, կ'ըսեն տնտեսագէտները: Բացի այդ, այս տարի փոխանցումներու աճը, ըստ Բոստանճեանի, դրական ազդեց նաեւ դրամի

ԼՈՒՐԵՐ

ԱՄՆ, ԵՄ եւ Մինսքի Խուճի Զամանախազահները Կ'արձգանգեն Սահմանի Լարուածութեան

ԵԱՀԿ գործող նախագահը եւ Մինսքի Խուճի համանախազահները հանդէս եկան յայտարարութիւններով, իսկ Հարաւային Կովկասի մէջ ԵՄ-ի յատուկ ներկայացուցիչը հեռախօսակցութեան ընթացքին քաղաքականութեան գերատեսչութիւններու ղեկավարներուն հետ:

Համանախազահները կոչ ըրած են Հայաստանին եւ Ատրպէյճանին անյապաղ հանդարտեցնելու իրավիճակը, ձեռնպահ մնալու սադրիչ հռետորաբանութենէ եւ գործողութիւններէ, ամբողջութեամբ կատարել Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան եւ հրադադարի համաձայնեցման այլ պայմանաւորութիւնները:

Համանախազահները վերահաստատած են հակամարտութեան բոլոր հիմնական հարցերը բանակցուած, համապարփակ եւ կայուն կարգաւորմամբ լուծելու անհրաժեշտութիւնը եւ կողմերուն կոչ ըրած են հնարաւորինս շուտ վերադառնալու բանակցութիւններուն իրենց հովանիի ներքոյ:

«Անոնք կը կրկնեն իրենց հովանիի ներքոյ ուղիղ երկկողմ խորհրդակցութիւններ կազմակերպելու առաջարկը, որպէսզի կողմերը վերանային եւ համատեղ համաձայնեցնեն կառուցուած քայլին օրակարգը՝ արտացոլելով իրենց առաջնահերթութիւնները՝ առանց նախապայմաններու», - նշուած է յայտարարութեան մէջ:

ԵԱՀԿ գործող նախագահ, Շուէտի արտաքին գործոց նախարար՝ Անն Լինդըն եւս հանդէս եկած է յայտարարութեամբ: Ան թուիթըր-նէս էջին գրած է. «Հայ - ատրպէյճանական սահմանին բազմաթիւ միջադէպերու մասին հաղորդումները լուրջ մտահոգութիւն կը

յարուցեն: Կողմերուն կոչ կ'ընենք զարգացնելու մարդասիրական քայլերը եւ ամբողջովին իրագործելու Նոյեմբեր 9-ի յայտարարութիւնը, որպէսզի բոլոր չլուծուած հարցերը կարգաւորուին խաղաղ ճանապարհով»:

Հարաւային Կովկասի Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ՝ Թոմաս Բլաքարը նախօրէին հեռախօսակցութեան ընթացքին Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին քաղաքականութեան գերատեսչութիւններու ղեկավարներուն հետ: Ըստ Ատրպէյճանի ԱԳՆ-ին՝ ԵՄ յատուկ ներկայացուցիչը մտահոգութիւն յայտնած է երկու պետութիւններու սահմանին յարուածութեան վերաբերեալ: Պայրամովը ըսած է, թէ «ատրպէյճանական բանակը կը պատասխանէ հայկական կողմի ռազմական սադրանքներուն» եւ որ Ատրպէյճանը կը պաշտպանէ իր միջազգային սահմանները: Ան նշած է, որ Հայաստանը պէտք է վերջ տայ նման անպատասխանատու վարքագիծի եւ կատարէ իր պարտաւորութիւնները, աւելցուցած է, թէ Ատրպէյճանը շահագրգռուած է սահմանի յարուածութեամբ եւ այդ խնդիրները դիւանագիտական ճանապարհով լուծելու կողմնակից է:

Աւելի վաղ նոյն ձեւակերպումները Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարը ներկայացուցած էր Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերով ԱՄՆ պետական քարտուղարի օգնականի պաշտօնակատար՝ Ֆրիլիֆ Ռիքըրդի վերջինիս հետ կայացած հեռախօսակցութեան ընթացքին: Թէ Ռիքըրդը, թէ Թոմաս Բլաքարը հեռախօսակցութեան ընթացքին նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարարի պարտականութիւնները կատարող՝ Արմէն Գրիգորեանին հետ:

Մոսկուան Պատրաստ Է Աջակցիլ Հայ - Ատրպէյճանական Սահմանին Իրավիճակի Կայունացման

Պաշտօնական Մոսկուան պատրաստ է աջակցիլ հայ - ատրպէյճանական սահմանին իրավիճակի կայունացման եւ քայլեր ձեռնարկել, որպէսզի տարածաշրջանը վերածուի կայունութեան գօտիի, ըսուած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան տարածած յայտարարութեան մէջ:



«Լրջօրէն մտահոգուած ենք հայ-ատրպէյճանական սահմանի առանձին հատուածներուն վերջերս արձանագրուած զինուած միջադէպերով, որոնք յանգեցուցած են մարդկային կորուստներու: Ցաւօք, իրադրութիւնը կը շարունակէ մնալ լարուած», - յայտարարած է ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչութիւնը՝ կոչ ընելով Հայաստանի եւ Ատրպէյճանին գերծ մնալու ցանկացած գործողութենէ, որ կարող է ա՛լ աւելի վատթարացնել սահմանային իրավիճակը, եւ տարածաչափութիւնները հարթել քաղաքական ու դիւանագիտական ճա-

նապարհով: «Ռուսաստանը պատրաստ է նաեւ առաջիկային ցուցաբերել անհրաժեշտ ողջ աջակցութիւնը», - յայտարարած է կառոյցը՝ որպէս լուծման ճանապարհ նշելով յարուածութիւնը թուլացնելու միջոցառումները, ինչպէս նաեւ սահմանի սահմանազատման եւ սահմանագծման համատեղ աշխատանքներու շուտափոյթ մեկնարկը:

«Մտադիր ենք աշխոյժ աշխատիլ, որպէսզի Հարաւային Կովկասը վերածուի կայունութեան, անվտանգութեան ու բարգաւաճման գօտիի՝ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի առաջնորդ-

Սեծագոյն Խնդիրն Է Ձինուած Ուժերու Բարեփոխումներու Գործընթացի Իրականացումը. Փաշինեան



Վարչապետ Փաշինեան Ձինուած Ուժերու բարձրագոյն սպայակազմի հետ հանդիպումի ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Պաշտպանութեան Նախարարութեան աշխատակազմին եւ Ձինուած Ուժերու բարձրագոյն սպայակազմին ներկայացուցած է նորանշանակ նախարար Արշակ Կարապետեանին, ընդգծելով, որ այսօր մեծագոյն խնդիրը Ձինուած Ուժերու բարեփոխումների գործընթացն առաւելագոյն թափով իրականացնելը:

«Առաջինը՝ ուզում եմ արձանագրել, որ այսօր Հայաստանի Հանրապետութեան շուրջ ունենք բաւականին լարուած իրավիճակ: Գիտէք նաեւ, որ Մայիսի 12-ից Ատրպէյճանի զինուած ուժերի ստորաբաժաններուն ապօրինի կերպով հատել են Հայաստանի Հանրապետութեան սահմանը: Եւ այս ընթացքում բազմիցս քննադատութիւններ են հնչել, թէ ինչու Հայաստանի զինուած ուժերը միջոցներ չեն ձեռնարկում՝ այդ իրադրութիւնը յաղթահարելու համար: Ուզում եմ արձանագրել՝ մեր դիրքորոշումը ի սկզբանէ եղել է հետեւեալը. քանի դեռ կայ հնարաւորութիւն՝ իրադրութիւնը լուծել դիւանագիտական, քաղաքական ճանապարհով, մենք գնալու ենք այդ ճանապարհով: Եւ քանի դեռ տեսնում ենք նման հնարաւորութիւն՝ պրոցեսները պիտի տանք հէնց այդ ճանապարհով», - ըսած է Նիկոլ Փաշինեան:

Վարչապետը արձանագրած է, որ, ըստ էութեան, Ատրպէյճանը կը շարունակէ որոշակի ազդեակութեամբ կարգաւորութիւն վարել Հայաստանի նկատմամբ:

«Եւ այդ քաղաքականութեան առանձնապատկերները հետեւեալն է՝ Ատրպէյճանը փորձում է տպաւորութիւն ստեղծել, թէ ինքը տարածաշրջանում եւ Հայաստանի շուրջ ստեղծել է մի օրակարգ, եւ ինքը, ըստ էութեան, պարտադրում է այդ օրակարգը: Այսինքն՝ այդպիսի տպաւորութիւն է ուզում ստեղծել:

Պիտի արձանագրենք, որ մենք մեր սեփական օրակարգն ունենք, եւ Հայաստանի Հանրապետութիւնը, ըստ էութեան, եղել է եւ շարունա-

կում է մնալ իր միջազգային պարտաւորութիւնների շրջանակում: Եւ մի նրբութեան մասին նաեւ պիտի ձեռնարկեմ պահէմ, որ այդ օրակարգի վերաբերեալ Ատրպէյճանը փորձում է սեփական մեկնաբանութիւնները ներկայացնել, եւ ինչպէս բազմիցս եմ ասել, նպատակն այդ օրակարգի հարցերի լուծման վիժեցումն է: Այսինքն՝ իրականում փորձ է արւում հնարաւորութիւն չտալ լուծել հարցեր, որոնք գտնուում են նաեւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան օրակարգում», - ըսած է վարչապետը:

Փաշինեան ընդգծած է, որ տարածաշրջանային ճանապարհներու բացումը Հայաստանի կառավարութեան առաջնահերթութիւններէն է:

«Ինչ է գրուած այդ յայտարարութեան մէջ: Այդ յայտարարութեան մէջ գրուած է, որ Հայաստանի Հանրապետութիւնը պիտի հնարաւորութիւն ունենայ Ատրպէյճանի տարածքով տարանցել բեռնէր: Ատրպէյճանը պիտի հնարաւորութիւն ունենայ Հայաստանի տարածքով տարանցել բեռնէր: Եւ ուզում եմ բոլորիդ ուշադրութիւնը հրաւիրել Յունուարի 11-ի յայտարարութեան տեքստի վրայ. այնտեղ շատ յստակ գրուած է, որ պէտք է քննարկուեն եւ պայմանաւորութիւններ ձեռք բերուեն մաքսային, սահմանապահ, անսխտաբանական, ֆիտոսանիտարական հսկողութեան վերաբերեալ: Այսինքն՝ կայ յստակ արձանագրում, որ ինչպէս ընդունուած է տրամաբանօրէն եւ ինչպէս տեղի է ունենում, Հայաստանի տարածքը՝ որպէս տարանցիկ ուղի օգտագործելու պարագայում, ինչպէս մնացած բոլոր դէպքերում է, այդ հատումը պէտք է տեղի ունենայ այդ կանոններով. ինչպէս են օրինակ այսօր հատում վրաստանի կամ Իրանի իսլամական Հանրապետութեան քաղաքացիները: Այսինքն՝ այդ նոյն կանոններով: Ի հարկէ, մենք այդ օրակարգն ենք ընդունել», - ըսած է Փաշինեան:

ներու ստորագրած Նոյեմբեր 9-ի եւ Յունուար 11-ի եռակողմ յայտարարութիւններուն համահունչ»,

- յայտարարած է Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ԶԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Շնորհաւորական Ուղերձ Յղած է Նիկոլ Փաշինեանին

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն շնորհաւորական ուղերձ յղած է Նիկոլ Փաշինեանին՝ ՀՀ վարչապետ նշանակուելու կապակցութեամբ:

Ուղերձին մէջ, մասնաւորապէս, ըստ էության. «Մեծարգոյ վարչապետ, խորհրդարանական արտահերթ ընտրութիւնների արդիւնքում Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պատասխանատու պաշտօնում նշանակուելու առիթով յղում ենք Ձեզ արդիւնաւէտ աշխատանքի Մեր մաղթանքները:

Արցախեան 44-օրեայ պատերազմի հետեւանքով մեր ժողովրդի կեանքում եւ մեր երկրի շուրջ ստեղծուած իրավիճակն այսօր հրամայական է դարձնում ՀՀ սահմանների անվտանգութեան ապահովումը, Արցախի կարգավիճակի յստակեցումը եւ մեր հայրենիքում

ընկերա-տնտեսական խնդիրների լուծումը: Առկայ մարտահրաւէրների յաղթահարման եւ հայրենական ապահով բարօր կեանքի կերտման աստուածահաճոյ ուղին ներքաղաքական լարուածութեան լիցքաթափումն է ազգային անդաստանում համերաշխութեան ու միաբանութեան մթնոլորտի հաստատումը»:

«Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հաւատարիմ իր կոչմանը, պիտի շարունակի իր աջակցութիւնը բերել մեր պետականութեան զօրացմանը՝ իր կարողութիւններն ի սպաս դնելով նաեւ հայրենիք-սփիւռք կապերի առաւել արդիւնաւորմանը, աշխարհասփիւռ մեր ժողովրդի ազգային ինքնութեան գիտակցութեան ամրապնդմանը եւ հոգեւոր կեանքի առաջընթացին», - ըստ էության ուղերձով:

Նորընտիր Ազգային Ժողովը

Շարունակուած էջ 1-էն

պանելու եւ պահպանելու Հայաստանի պետականութիւնը, յայտարարեց Արմէն Սարգսեան՝ շեշտելով, որ արդիւնաւէտ կառավարման հույսերը նախ ազնիւ եւ պատասխանատու ըլլալն է:

«Նախեւառաջ պէտք է լինել ազնիւ եւ պատասխանատու: Ցանկալին որպէս իրականութիւն ներկայացնելու փորձերը, Ամբոխավարութիւն եւ ժողովրդականութիւնը ճանապարհ են դէպի փակուղի: Պէտք է ազնիւ, բաց եւ ուղիղ խօսենք առկայ խնդիրների մասին, սթափ եւ սառնասրտօրէն գնահատենք մեր իրական հնարաւորութիւնները, խիզախութիւն ունենանք ընդունել մեր թերութիւնները եւ սխալները եւ պատասխան տանք դրանց համար: Իւրաքանչիւրս պէտք է պատասխանատու զգայ իրեն՝ մեր երկրի, մեր պետականութեան ապագայի համար: Միայն ազնիւ եւ արդար կառավարումը կարող է փոխել իրավիճակը, յաղթահարել հիասթափութիւնը, լաւատեսութիւն սերմանել, վերականգնել եւ ամրապնդել կապը քաղաքացու եւ պետութեան մի-

ջեւ», - ըստ էության նախագահը:

Այնուհետեւ տեղի ունեցաւ պատգամաւորներու երգմանակալութեան արարողութիւնը:

Ութերորդ գումարման Ազգային Ժողովը երկրորդ անգամ փակ գաղտնի քուէարկութեամբ ԱԺ նախագահ ընտրեց «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան կողմէ առաջադրուած Ալեն Սիմոնեանը: Քուէարկութեան մասնակցած էր 71 պատգամաւոր: Ալեն Սիմոնեան ստացած է 71 ձայն: Ընդդիմադիր խմբակցութիւններու պատգամաւորները չեն մասնակցած քուէարկութեան:

Նոյն օրը, Նախագահ՝ Արմէն Սարգսեանի հրամանագիրով՝ Նիկոլ Փաշինեան նշանակուեցաւ վարչապետ:

Ըստ Սահմանադրութեան 149-րդ յօդուածի Ա. մասի՝ «Հանրապետութեան նախագահը նորընտիր Ազգային Ժողովի լիազօրութիւնների ժամկէտն սկսուելուց յետոյ անշաղկապ վարչապետ է նշանակում Սահմանադրութեան 89-րդ յօդուածով սահմանուած կարգով ձեւաւորուած խորհրդարանական մեծամասնութեան ներկայացրած թեկնածուին»:

Ֆրանսա Հայաստանին Նուիրած է

Շարունակուած էջ 1-էն

մարած է հայ գերիներու նկատմամբ Ատրպէյճան տեղի ունեցող շինծու դատավարութիւնները:

Մաքրոնը յոյժ կարեւորած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանագծումն ու սահմանագատումը: Համաձայնելով այս մտքին՝ Նիկոլ Փաշինեան ընդգծած է, որ հայ-ատրպէյճանական սահմանագատումն ու Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորումը որեւէ կերպ խաչաձեւուող գործընթացներ չեն: Ան կրկնած է սահմանի երկայնքով ՀԱՊԿ դիտորդական առաքելութիւն տեղակայելու, կամ նման որոշման անհնարինութեան պարագային՝ որպէս այլընտրանք, ԵԱՀԿ Մինսքի խումբի համաձայնագահող երկիրներու դիտորդական առաքելութեան տեղակայման առաջարկութիւնը:

Ֆրանսայի նախագահը վերահաստատած է իր պատրաստակամութիւնը՝ շարունակելու հետեւողական ջանքեր գործադրել տարածաշրջանի կայուն խաղաղութեան հաստատման ուղղութեամբ:

Հայաստանի վարչապետը համոզմունք յայտնած է, որ տարածաշրջանային համաթեքսթ ունեցող նախաձեռնութիւններն ու քայլերը կրնան յաջողութեան հասնիլ, եթէ անոնք արժանանան ԵԱՀԿ Մինսքի խումբի բոլոր համաձայնագահող երկիրներու հաւանութեան: Վարչապետ Փաշինեան ընդգծած է նաեւ, որ Հայաստանի կառավարութիւնը ողջունած է ԵԱՀԿ Մինսքի խումբի համաձայնագահողներու՝ Նոյեմբեր 9-ին յաջողած յայտարարութիւնները, անոնց կարողին՝ բանակցային գործընթացը վերականգնելու ուղղութեամբ եւ պատրաստ է լիարժէք ներգրաւուել բանակցային գործընթացին մէջ:

Լիլիթ Մակունց Նշանակուած է ԱՄՆ-ի Սօս Հայաստանի Արտակարգ Եւ Լիազօր Դեսպան

ՀՀ նախագահ՝ Արմէն Սարգսեանի հրամանագիր ստորագրած է «Իմ քայլը» խմբակցութիւնը 2,5 տարի ղեկավարած Լիլիթ Մակունցը ԱՄՆ-ի մօտ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան նշանակելու մասին, յայտնած է նախագահի աշխատակազմը:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկութիւնը՝ համաձայն Սահմանադրութեան 132-րդ յօդուածի 1-ին մասի 2-րդ կէտի.

Լիլիթ ՄԱԿՈՒՆՑԻՆ նշանակել Ամերիկայի Միացեալ Նահանգներում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ չորս տարի ժամկէտով (նստավայրը՝ Ուաշինկթըն)», -



Նորանշանակ դեսպան Լիլիթ Մակունց

մասնաւորապէս ըստ էության հրամանագրով:

Նոր Խորհրդարան Նոր Կառավարութիւն

Շարունակուած էջ 1-էն

տերազմեան ցոյցերու ընթացքին:

Քաղաքական գործընթացներու կողքին ուշագրաւ էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի շնորհաւորական մամակը՝ ուղղուած Նիկոլ Փաշինեանին: «Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հաւատարիմ իր կոչմանը, պիտի շարունակի իր աջակցութիւնը բերել մեր պետականութեան զօրացմանը՝ իր կարողութիւններն ի սպաս դնելով նաեւ հայրենիք-սփիւռք կապերի առաւել արդիւնաւորմանը, աշխարհասփիւռ մեր ժողովրդի ազգային ինքնութեան գիտակցութեան ամրապնդմանը եւ հոգեւոր կեանքի առաջընթացին», - ըստ էության վեհափառի ուղերձին մէջ: Այսպիսով, որոշ չափով առիթ կը ստեղծուի նոր էջ մը բանալու Պետութեան եւ Եկեղեցւոյ միջեւ, որուն բարձրաստիճան հոգեւորականները միանալով արմատական ընդդիմութեան՝ հանդէս եկան վարչապետի հրաժարականի պահանջով, ինչ որ խրաւրտ յառաջացուց ոչ միայն Պետութեան ու Եկեղեցւոյ միջեւ, այլ եւ Եկեղեցւոյ ու Հայաստանի եւ սփիւռքի մէջ Հայութեան մէկ ստուար զանգուածին միջեւ:

Միւս կողմէ, Հայ-ատրպէյճանական սահմանին վրայ իրավիճակը կը մնայ լարուած: Պաքու կը փորձէ ամէնօրեայ բախումներ հրահրելով Հայկական կողմին պարտադրել զիջումներ, որոնք դուրս կ'իյնան Յունուար 11-ին ստորագրուած Ռուսաստան-Հայաստան-Ատրպէյճան եռակողմ յայտարարութեան բովանդակութեան: Այս կապակցութեամբ, վարչապետ Փաշինեան պաշտպանութեան նոր նախարարի ներկայացման առթիւ բանակի բարձրագոյն սպայակազմին առջեւ անգամ մը եւս շեշտեց, որ Ատրպէյճանին միջանցք տալու օրակարգ գոյութիւն չունի ու չի կրնար ունենալ: «Բոլորը պէտք է իմանան, որ Հայաստանի Հանրապետութեան տարածքով միջանցքի վերաբերեալ երբեք որեւէ պայմանաւորուածութիւն չի եղել: Եւ Հայաստանի Հանրապետութիւնը ոչ բանաւոր, ոչ գրաւոր այդ թեմայի վերաբերեալ ոչ միայն որեւէ պարտաւորութիւն չի ստանձնել, այլեւ մենք բոլոր դէպքերում, երբ այդպիսի նախադասութիւններ հնչել են, յստակ

մեր դիրքորոշումներն արտայայտել ենք: Եւ այն պայմանաւորութիւնները, որ ունենք, ըստ էության, արտայայտուած են Նոյեմբերի 9-ի եւ Յունուարի 11-ի յայտարարութիւնների մէջ», - շեշտեց վարչապետը:

Նոր կառավարութեան առաջնահերթութիւններուն մէջ կ'իյնայ նաեւ համաճարակի դէմ պայքարը: Հայաստանի մէջ պատուաստումի արշաւը կ'ընթանայ խիստ դանդաղ ու մեծ թիւով քաղաքացիներ կը մերժեն լսել առողջապահական ոլորտի պատասխանատուներու յորդորները, որ վարակը յաղթահարելու միակ ձեւը պատուաստումն է: Առանց այս տագնապի լուծման կարելի պիտի չըլլայ վերադառնալ բնականոն կեանքի ու աշխատանքի:

Աւելի յուսադրիչ է իրավիճակը տնտեսական գետնի վրայ: Վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ ամիսէ-ամիս կը բարձրանան աշխատատեղերու թիւերը: Կը բարձրանան նաեւ աշխատավարձերը, յատկապէս մասնաւոր հատուածէն: Որոշ ոլորտներու մէջ կայ նոյնիսկ աշխատողներու պակաս ու բացը գոցելու համար այլ երկիրներէն գործաւորներ կու գան Հայաստան: Նկատելիօրէն աւելցած է նաեւ արտասահմանէն ուղարկուող փոխանցումներու ծաւալը, որոնք մեծ դեր ունին տնտեսութեան աշխուժացման ու դրամի շրջանառութեան մէջ: Ասոնց կողքին կան Եւրոպական կառոյցներու մեծածաւալ ներդրումներու մասին յանձնարարութիւնները, որոնց իրականացումը մեծապէս պիտի նպաստէ ժողովուրդի կենսամակարդակի բարձրացման:

Այսուհանդերձ, տնտեսական գետնի վրայ մեծ աշխատանք կայ տակաւին կատարելիք: Վիճակի որոշ բարելաւումները ուղղակի արդիւնք են վերջին տարիներուն կաշառակերութեան նուազումին ու պետական գանձի կողոպուտի բացակայութեան:

Սիւստիկ այս պայմաններուն տակ է որ, նոր խորհրդարանն ու նոր կառավարութիւնը կ'անցնին գործի՝ իրենց առջեւ ծառայած մարտահրաւիրները յաղթահարելու, իրականացնելու ժողովուրդի սպասումները ու երկիրի նաւը առաջնորդելու աւելի կենսունակ ու ապահով ափ:

Massis Weekly

Volume 41, No. 29

Saturday, AUGUST 7, 2021

Nikol Pashinyan Reappointed Prime Minister of Armenia



YEREVAN — Armenian President Armen Sarkisian appointed acting Prime Minister Nikola Pashinyan to the post of prime minister on August 2, the first day of the parliament's new term following an election six weeks ago.

Sarkisian signed the relevant decree after the ruling Civil Contract party nominated Pashinyan to the post as lawmakers started the inaugural session.

Pashinyan has 15 days to win approval for a cabinet from parliament.

His Civil Contract party holds 71 of the legislature's 101 seats since snap elections in June prompted by a crisis following a truce in intense fighting with neighboring Azerbaijan over Nagorno-Karabakh and nearby districts.

Russian President Vladimir Putin

Ապագայում ուշադիր կը լինեմ մասնակիրների եւ ապագայ մասնակիրների առաջարկների նկատմամբ: Միասին մենք կը փորձենք աւելի մեծ լսարանի համար աւելի մատչելի դարձնել Հայաստանը, հայերին եւ հայկական քրիստոնէութիւնը:

-Ո՞րն է լինելու այս տարի հայագիտութեան ամպիոնի կողմից առաջարկուող դասընթացի թեման:

-2021-2022 թուականների համար մենք ընտրել ենք հետեւեալ թեմաները.

* Հայաստանի եւ հայերի պատմութիւնը ծագումից մինչեւ մեր օրերը:

* Հայկական եկեղեցիները (առաքելական, կաթոլիկ, աւետարանական). պատմութիւն, աստուածաբանութիւն եւ հոգեւոր արժէքներ:

* Եկեղեցիների միջեւ փոխարարբերութիւնները հեռանկարներ:

Հայաստանի Գլխավոր Հիւպատոսութիւնը Խորացնում է Համագործակցութիւնը Ուեստ Հոլիվուտ Քաղաքի Հետ



Յուլիսի 27-ին Լոս Անճելոսում ՀՀ գլխավոր հիւպատոս, արտակարգ եւ լիազոր դեսպան Արմէն Բայբուրդեանը հեռավար հանդիպում ունեցաւ Ուեստ Հոլիվուտի քաղաքապետ Լինզի Հորվաթի հետ: Նրանք տեղեկատուութուն փոխանակեցին փոխադարձ հետաքրքրութիւններ կապակցող հարցերի շուրջ եւ քննարկեցին հայաստանեան գլխավոր հիւպատոսութեան եւ Ուեստ Հոլիվուտի քաղաքապետի խորհրդի միջեւ համագործակցութեան խորացման ուղիների խնդիրը: Զրուցակիցները պայմանաւորուեցին Ուեստ Հոլիվուտ քաղաքում համատեղ երկօրեայ արուեստների ու մշակութային հայկական փառատոն կազմակերպելու վերաբերեալ:

Դեսպան Բայբուրդեանն իր երախտագիտութիւնը յայտնեց քաղաքապետ Հորվաթին ու քաղաքապետութեան անկախութիւնը ճանաչող բանաձեւի ընդունման համար 2021 թուականի Յունուարի 19-ին: Լինզի Հորվաթն ու քաղաքապետի խորհրդի անդամ Սեպի

Շայնը նախաձեռնել էին նշեալ բանաձեւը: Քաղաքապետ Հորվաթն ասաց, որ իր ազատութեան համար մարտնչող Արցախի հայութեանն աջակցութիւն յայտնելը շատ բնական քայլ էր: Գլխավոր հիւպատոսը նաեւ իր գնահատանքը փոխանցեց քաղաքապետի խորհրդի կողմից Հայոց Յեղասպանութիւնը ճանաչող եւ դատապարտող բանաձեւեր ընդունելու համար: Իր հերթին, քաղաքապետ Հորվաթը վեր հանեց Հայոց Յեղասպանութեան, Հոլոքոստի եւ մարդկութեան դէմ կատարուած այլ յանցագործութիւնների վերաբերեալ կրթական ծրագրերի բարելաւման կարեւորութիւնը Լոս Անճելոսի միացեալ դպրոցական մարզի շրջանակներում: Ուեստ Հոլիվուտը պատկանում է նշեալ դպրոցական մարզին:

Լինզի Հորվաթը ստանձնել է Ուեստ Հոլիվուտի քաղաքապետի պաշտօնը 2020 թ-ին: Նա ընտրուել է որպէս Ուեստ Հոլիվուտի քաղաքապետի խորհրդի անդամ 2015 թ-ին՝ մինչ այդ ներկայացուած լինելով նոյն խորհրդում 2009-ից 2011 թուականը:

«Իմ Հաւատանքս»



ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Կը սիրեմ քեզ, հայրենի՛ ժողովուրդ:
Սփիւռք նստած, օտարանալու վտանգին ենթակայ, չեմ կրնար չսիրել քեզ, հայրենի՛ իմ ժողովուրդ: Չեմ կրնար չսիրել այն աչքերը, որոնք ամէն օր կը յառին Արարատին ու Արագածին եւ կ'երդնուն տէր կանգնիլ անոնց առ յաւէտ:
Կա՞յ արդօք Արարատ՝ առանց քու աչքերուդ:
Կը սիրեմ քեզ, հայրենի՛ ժողովուրդ: Ինչպէ՞ս չսիրեմ քեզ, երբ ամէն ճգնաժամի պատրաստ ես գաւազներուդ ամէնէն ընտիրը զոհաբերելու հայրենիքի փրկութեան բազինին: Պիտի մաղթէի երբեք «Եռաբլուր» չունենալ, բայց ինչպէս չսիրել քեզ, հայրենի՛ ժողովուրդ, երբ ամէն օր, խունկ, արցունք ու ծաղիկ ընծայ կը տանիս հայրենիքիս նահատակներուն:

Կը սիրեմ քեզ, հայրենի՛ ժողովուրդ, երբ պատերազմէն գրեթէ մէկ տարի ետք արդէն ոտքի ես, լծուած ես ապագայակերտ աշխատանքի եւ կ'ուզես վերածաղկեցնել երկիրը մեր Նախիրեան: Եռաբլուրի արցունքին այսօր խառնած ես ժպիտը Երեւանի: Կը սիրեմ քեզ, քաղաքամա՛յր, ժողովուրդիդ վերածնած ժպիտովը յաւիտենական: Թէեւ տարակարծիք շատ մը հարցերու շուրջ՝ կը սիրեմ քեզ, հայրենի՛ ժողովուրդ: Տարակարծութիւն ու տարբեր տեսակէտներ՝ հարստութիւն են այլապէս: Այդպէս ալ կը սիրեմ քեզ:
Կը սիրեմ քեզ, հայրենի՛ ժողովուրդ, նոյնիսկ երբ կը մոռնաս


Նոր Գիրքեր «Կեանքի Ոլորտներում» Հեղինակ՝ Ռուբէն Կորիւն (Ռուբէն Ս. Քէշիշեան)

Գ. ՍՈՒՈՅԵԱՆ

Վերջերս Կլենտէյլի «Ալիք» հրատարակչատունէն լոյս տեսաւ ծանօթ գրող եւ հրապարակագիր Ռուբէն Կորիւնի (Ռուբէն Սամսոնի Քէշիշեան) «Կեանքի Ոլորտներում» հատորը: Հեղինակը անդամ է Հայաստանի եւ Գալիֆորնիոյ Հայ Գրողներու Միութեան, ինչպէս նաեւ եղած է Հայ-Ամերիկեան գրողներու միութեան վարչութեան անդամ:

Ռուբէն Կորիւնը նախապէս հրատարակած է «Մեր Կեանքի Ուղին Դէպի...» (2006), «Կեանքի Խճանկարներ» (2008) «Արեւավառիմ Երկիր» (2010) եւ «Մարդու Առաքինութեան ճառագումը»:
312 էջերէ բաղկացած ներկայ հատորին համար կարելի է գաջն նմանցնել փոքր տարեգիրքի մը, որուն մէջ ափմոփուած է 73 տարբեր ենթախորագիրներ ունեցող պէսպիսուն խճանկար մը...: Մաղկաբաղ մըն է կարծէք այլազան եւ խաչտափողէ գրութիւններու: Հոն առկայ են թէ գրականը, թէ հրապարակագրականը, գրախօսականներն ու գեղարուեստական պատումները: Այս կապակցութեամբ գրող Գորիշ Դաւթեան արժեւորելով Ռուբէն Կորիւնի գրականութիւնը հետեւեալ նշումը կը կատարէ. «...Ռ. Կորիւնը սրտազին նուիրուածութեան մրմունջով է իր մտորումները բանաձեւում հայրենիքին ու ազգին, ոչ թէ պատշաճութեան համար, այլ հայրենիքին եւ ազգին պատկանելու ինքնագիտակցութեան հաւատոյ հանգանակով, որ պաշտամունքի տաճարն է: Նրա գրականութիւնը նրա անհատականութեան հայելին է, որ դաճուած լինելով հեղինակի սրտում, այժմ դուրս է յորդել հատորների էջերին»:

Ռ. Կորիւն գիրքին մէջ անդրադարձ ունի նաեւ Արցախի մասին ուր կ'ըսէ. «...Արցախ խեղճացած ու փոքրացած, տեսքով կղզիացած վիճակ է ստացել, գալիք օրերին շուրջ բոլորը թուրքերով բնակուելու, որոնք իրենց սպառնալիքներով, պատուհաս են դառնալու հայերին, որպէս զի իրենց հայրենի բնօրրանը թողնեն հեռանան, ինչպէս արուեստ Նախիջեւանի պարագային»:
Սոյն հատորին մէջ արտատպումներ կան «Նոր Օր»էն, «Մա-



սիս»էն եւ այլ հրատարակութիւններէն: Առանձնապէս նշուած է «Մասիս» թերթի 35-ամեակի մեծարանքի հանդիսութիւնը թերթի նուիրեալներուն: Գիրքը համեմուած է նաեւ յիշարժան նկարներով:

Գիրքի այլ հատուածներուն մէջ նշուած են սրտի խօսքեր տարբեր անձերու մասին՝ Թիմուր Ադամեան, Անդրանիկ Սարեան, Խնչուժ Խնչումեան, Յարութ Քէշիշեան, Արամ Սեփեթեան, Սիրուն Երէցեան, Գեր. Տ. Ներսէս Արք. Պողոսյան, Դոկտ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան եւ ուրիշներ:

Հեղինակը շահեկան գրախօսական մը ունի նաեւ «Մասիս»ի նախկին խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեանի «Մեր Դիտանկիւնէն» Ազգային մտորումներ եւ կեցուածները» ստուար հատորի մասին, ուր ընդգրկուած են Տօքթ. Արշակ Գազանճեանի 2000-2015 թուականներն ընդգրկող «Մասիս»ի մէջ լոյս տեսած իր խմբագրական յօդուածները «Մեր Անկիւնէն» խրագիրով:

Ծնունդով իրանահայ ըլլալով Ռուբէն Կորիւն գիրքին մէջ բաւական տեղ յատկացուցած է Լոս Անճելոսի իրանահայ միութեան գործունէութեան, ինչպէս նաեւ առանձին պատումներ իրանահայերու յատուկ ազգային-աւանդական կարգ մը սովորութիւններուն մասին, որոնք մեծ հետաքրքրութեան արժանի են: Փափաքելի է որ այդ գաւառագրական եւ գիւղագրական ժանրը զարգացնէ իր գրական յառաջիկայ գործերուն մէջ: Նորանոր յաջողութիւններով:

զիս՝ սփիւռքացած հայ օտարի: Ունիս հոգերդ, երազներդ կրնան ըլլալ տարբեր, բայց ոչ անտարբեր: Աշխարհագրականօրէն հեռու, երազներով կապուինք իրարու: Կը սիրեմ քեզ, հայրենի՛ ժողովուրդ: Կը սիրեմ քեզ, հայրենի՛ ժողովուրդ, նոյնիսկ երբ կը խօսինք հայերէն, բայց չենք հասկնար զիրար: Երկու հարուստ լեզուներ, մէկութեան յոյսով կը սիրեմ լեզուդ, հայրենի՛ իմ ժողովուրդ: Կը սիրեմ քեզ նոյնիսկ երբ քաղաքական ընտրանքներդ չեմ բաժնէր: Դուն ես հողին ու պետութեան պահակը, ճակատագիրն ալ է քուկը: Ինչպէ՞ս չսիրեմ քեզ: Կը սիրեմ քեզ, հայրենի՛ ժողովուրդ, որովհետեւ կը սիրեմ բանակը հայոց: Դուն ես մայրը մեր հերոսներուն եւ հայրը քաջագործութեանց: Դուն ես անոնց գէնքերը կապող խաչկապ, ռազմի պարը

պարող, երբեմն յաղթանակի գինին խմող, իսկ երբեմն պարտութեան մրուրը ճաշակող ծնողը գինուորաց: Ինչպէ՞ս չսիրեմ քեզ: Կը սիրեմ քեզ, հայրենի՛ ժողովուրդ: Հողն ինչ արժէ առանց քեզի: Քրտինքիդ շաղախովն է այսօր օծուն հայրենի հողը հայկական: Դուն ծնողն ես հայրենիքին: Սիրտս տամ քեզի, ծնողն իմ հայրենեաց: Սփիւռքացած հայ կը մաղթեմ չըլլալ որդի անառակ: Բայց հուսկ եղիր տէրը նաեւ սփիւռքի: Պիտի սիրեմ քեզ ամէն պարագայի: Զիք հայրենիք առանց ժողովուրդի: Զիք Հայաստան առանց հայրենի ժողովուրդի: Զիք սփիւռք առանց հայրենիքի: Կը սիրեմ քեզ, հայրենի՛ իմ ժողովուրդ:

Հենրիկ եւ Մարիեթա Անասեանի Աղանդեայ Ամուսնութեան 60-ամեակի Շքեղ ճաշկերոյթը



Լոսանձեյլոսահայ գաղութի գեղարուեստասէր շրջանակին համար յիշարժան երեկոյ մըն էր որ տեղի ունեցաւ Յուլիսի 30ին, 2021, Հոլիվուտի գեղակերտ Տաղլեան սրահին մէջ: Շուրջ 200 հրաւիրեալներու ընտրանի փաղանգ մը ներկայ էր, միասնաբար նշելու ծանօթ երաժիշտ, գրող եւ խմբավար մասեթրօ Հենրիկ Անասեանի եւ իր շնորհալի կնոջ երգչուհի Մարիեթայի աղանդեայ ամուսնութեան 60-ամեակը: Հրաւիրելուներու մէջ էին Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Արմէն Բայբուրդեան, իր համակրելի տիկնոջ հետ: Ինչպէս նաեւ տեղւոյս հայկական տարբեր կազմակերպութիւններու, մամլոյ եւ հեռատեսիլի, արուեստասէրներ հասարակութեան եւ ընտանիքի անմիջական շրջանակի ներկայացուցիչներ ու անդամներ:

Տաղլեանի գեղազարդ պարտէզի ընկերային ժամէն ետք՝ ներկաները հրաւիրուեցան սրահ, իրենց տեղերը գրաւելու ճոխ սեղաններու շուրջ: Այդտեղ հաւաքուած հարսներու շնորհը հետաքրքրութեամբ դիտեցին Հենրիկ եւ Մարիեթա Անասեաններու կեանքին նուիրուած երաժշտախառն կարճամետրաժ շահեկան շարժապատկեր մը:

Հարսանեկան պաշտօնական արարողակարգով մուտք գործեցին հարսն ու փեսան, իրենց հետեւորդներով, որոնք ողջունուեցան յոսնկայ ծափահարութիւններով: Այս առթիւ տեղի ունեցաւ Ս. Պսակի կարճ արարողութիւն մը, նախագահութեամբ Արժ. Տ. Յովսէփ Աւ. Քհնյ. Յակոբեանի: Նախապէս իրենք չեն պսակուած....:

Այնուհետեւ սկսաւ հարսանեկան խրախճանքը, բացառիկ ուրախ տրամադրութեան ներքեւ:

Գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը, որ մեծ ձեռնհասութեամբ վարեց երիտասարդ եւ շնորհալի «թամատա» Արմէն Ամիրեանը (Հայաստանի Մշակույթի նախկին նախարար - Քոչարեանի օրով): Յաջորդաբար տասնեակ մը բաժակաճառերով իրենց շնորհաւորութիւններն ու բարե-

մաղթութիւնները փոխանցեցին Անասեան ամուսնու գաւակները, թոները, «Միփան» երգչախումբի, հայ մամուլի եւ մշակութասէր հասարակութեան ներկայացուցիչները:

Դրուատալից ելոյթով մը հանդէս եկաւ Լոս Անձեյլոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Արմէն Բայբուրդեան: Ան բարձր գնահատեց Հենրիկի եւ Մարիեթայի արժանիքները, յատկապէս Հայրենիքի եւ սփիւռքի միջեւ բարեկամական եւ ընկերային բնագաւուններուն մէջ իրենց բերած դրական ներդրումը: Ապա յանձնեց յատուկ յուշանուէր մը:

Յայտագրի գեղարուեստական բաժինին մէջ Արամ Անասեան ապրուստով մեկնաբանեց իր հօր յօրինած «Ափ մը հող» երգը: Ելոյթներով հանդէս եկան նաեւ շնորհալի երգիչներ Անահիտ Ներսիսեանը, Ռազմիկ Մանսուրեանը եւ տուտուկահար Ռուբէն Յարութիւնեանը:

Միւսները օրուան կը գոլգոլիպէր նաեւ սրահին մէջ ներկայ եղող ոմանց ծննդեան եւ ամուսնութեան տարեդարձները: Անոնք եւս արժանացան յատուկ յիշատակութեան եւ կարկանդակներու:

Օրուան գլխաւոր կարկանդակը 60-ամեակի աղանդեայ տարեդարձը նշող ուտեստն էր, որ պարահարթակ բերուելով կատարուեցաւ երգախառն հատման արարողութիւնը, որուն անմիջապէս յաջորդեցին հարսանեկան տոհմիկ պարերը, ստեղծելով խրախճանքի ուրախ մթնոլորտ:

Այս առթիւ շնորհակալական խօսքին մէջ մասեթրոն իր անհուն ուրախութիւնը յայտնեց որ կը գտնուի իր ընտանիքին մէջ: «Բոլորդ ալ իմ հարազատներս էք» ըսաւ եւ մաղթեց բոլորին քաջաւորով, երկար եւ երջանիկ տարիներ:

Բացառիկ տօնակատարութիւն մըն էր, որուն նմանը հագուադէպ է այս գաղութին մէջ:

Կրկին անգամ կը նորհաւորենք Անասեաններու սիրոյ 60-ամեակը:

Արեւմտեան Թեմի Sound Of Children Ամառնային Ճամբարի Հաշուետու Հանդէսը



16 Յուլիս, 2021-ի երեկոյեան՝ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի շրջափակին մէջ, տեղի ունեցաւ Արեւմտեան Թեմի հովանու ներքոյ գործող Sound of Children մշակութային կեդրոնի կողմէ կազմակերպած ամառնային ճամբարի հաշուետու հանդէսը, որին ներկայ գտնուեցին Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը, Մայր Տաճարի հոգեւոր հովիւ՝ Տ. Խաթակ Քհնյ. Շահապեանը, թեմի մի շարք եկեղեցականներ, ուսուցիչներ, ծնողներ, հարազատներ եւ այլք:

Հաշուետու հանդէսը բացուեցաւ Տէրունական «Հայր Մեր» աղօթքով, որմէ վերջ, ճամբարի տնօրէն տիկին Նունէ Մովսէսեանը ողջունեց ներկաները եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօրը իր հայրական հոգածութեան եւ մշտնաշնայ խնամքի համար, ապա ան շնորհակալութիւն յայտնեց ճամբարի մասնակից երեխաներուն, ծնողներուն, ուսուցիչներուն եւ բոլոր ներկաներուն: Այնուհետեւ տրուեցաւ հանդէսի մեկնարկը, չընթացս որու փոքրիկները իրենց գեղեցիկ արտասանութիւններով, ազգային երգերով եւ կատարումներով հիացուցին ներկաները:

Հանդէսի վերջաւորութեանը, խօսք առաւ Արեւմտեան Թեմի հովանու ներքոյ գործող Sound of Children կենտրոնի տնօրէն տիկին Սիրվարդ Գաւուզեանը, ով ներկաներուն ներկայացուց այս տարուայ ամառնային ճամբարի գործունէութեան եւ հանդէսի կազմակերպման ընթացքը, նշելով նաեւ, որ սա կարեւոր եւ առանցքային ձեռքբերում մըն էր համաճարակային սահմանափակումներէն յետոյ: Տիկին Սիրվարդ Գաւուզեանը իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, ապա սիրով հրաւիրեց Սրբազան Հօրը իր հայրական խօսքը փոխանցելու համար:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր խօսքը ուղղեց ներկաներուն՝ ըսելով. «Սիրելի տիկին Գաւուզեան՝ ճարտարապետ Sound of Children ծրագրի, սիրելի ուսուցիչներ, ծնողներ, հիւրեր, ներկաներ եւ անչափ սիրելի մանուկներ, երբ հրճուանքով կը լսէինք մեր փոքրիկներու սրտերէն բխում առած բառերը, ահամայից կը զգայինք թէ որքա՞ն կեանք կայ արտասանուած ամէն մէկ բառին մէջ, որոնք կ'արտացոլէին անոնց հոգիներու մէջ ամփոփուած Աստուածային սէրը՝ փոխանցելով մեզ, իւրաքան-

չիւրիս հոգուն եւ էութեանը: Տարակոյս չունենք, որ դուք սիրելի ծնողներ, այս երեկոյին առաւել եւս հպարտ զգացիք, քանզի ձեզանից իւրաքանչիւրի գաւազը իր ներկայութեամբ կը խորհրդանշէ Հայաստանի ներկայութիւնը, մեր մայր երկրի ներկայութիւնը՝ Սուրբ էջմիածնի հովանիի ներքոյ:

Այս երեկոյի տօնական գեղեցիկ հանդէսը, որի գլխաւոր ճարտարապետն է ազնուաշուք տիկին Սիրվարդ Գաւուզեան եւ ով արժանի է բացառիկ ծափահարանքի եւ մեծարանքի, ինչպէս նաեւ այս տարուայ ամառնային մեր ճամբարի տնօրէն տիկին Նունէ Մովսէսեանին եւ իր բոլոր աշխատակիցներուն կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը:

Սիրելի փոքրիկներ, երբ ամեն առաւօտ այստեղ, այս հրապարակի վրայ աղօթք կը կատարէիք, ես յաճախ ձեզ հետ լինելով եւ երբեմն ալ իմ սենեակէն լսելով ձեր ձայնը, կը զգայի, թէ ինչպէս արշալոյսի առաւօտեան ջերմ արեւը կը լուսաւորէ ձեզանից իւրաքանչիւրի կեանքը եւ հոգին: Այս պահին կ'ուզեմ փառք տալ Աստուծոյ, շնորհակալութիւն յայտնել իւրաքանչիւրիդ նաեւ սիրելի ծնողներ, որ ձեր այս հրաշք երեխաները, մասնակիները, պատանիները կը վստահէք մեզ այս մէկ ամսուայ ընթացքին, որպէսզի մեր եկեղեցւոյ ջերմագին ծոցին մէջ աւելիով սովորեն հայոց լեզուն, հայ երգը դարձնեն նաեւ իրենց սրտի թրթռացումը, իրենց հոգու մէջ զգան նաեւ սէրը մեր մայր երկրի եւ անշուշտ ամենից կարեւորը՝ իրենց հոգու, էութեան մէջ զգան հայու հպարտ եւ անպարտ ներկայութիւնը:

Սիրելիներս, մեր կեանքի ճանապարհը մշտապէս եղած է պայքարի ճանապարհ, բայց մենք միշտ էլ յաղթող ենք եղած այդ ճանապարհին, աւելի քան 1700 տարիներու Քրիստոնեայ Հայաստանը, ինչպէս Քրիստոսի կեանքի ճանապարհը՝ եղած է յաճախ իբրեւ խաչի ճանապարհ, Գողգոթայի ճանապարհ, տառապանքի ճանապարհ, բայց այդ ամենով հանդերձ եղած է նաեւ յարութեան եւ յաղթութեան ճանապարհ, ուստի այս երեխաները մեզի համար յաղթանակի ճանապարհն է, որ կը խորհրդանշեն:

Սիրելի ներկաներ, ես կ'ուզեմ յատուկ կերպով անգամ մը եւս իմ խորին գնահատութիւնը յայտնել անձնապէս եւ մեր հոգեւորականաց անունից, բոլորիդ անխտիր, հա-

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻՒ ՇԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

10 Հազար Տոլարի Փոխարեն 2 Հազար Տոլար. Քթի Պլաստիկ Վիրահատութեան Համար Օտարերկացիները Գալիս Են Հայաստան



ՍԵՐԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Պլաստիկ վիրահատութիւնները ամենատարածուածը հայերի շրջանում մինչեւ շարունակում է մնալ քթի պլաստիկ վիրահատութիւնը, քանի որ շատերն ուզում են փոխել իրենց «հայկական քիթը»: Հետաքրքիր է, որ անգամ երկրից դուրս ապրող մեր հայրենակիցները ու նաեւ օտարերկրացիները յաճախ Հայաստանում են դիմում պլաստիկ վիրահատութեանը, քանի որ այստեղ գնելու բաւականին մատչելի են: Ինչու ամերիկեան եւ եւրոպական երկրներում քթի վիրահատութեան համար վճարել 10,000 տոլար, եթէ Հայաստանում էսթետիկ քիթ ստանալու համար կարելի է վճարել ընդամենը 1000-2000 տոլար:

Մեր գրողակից վիրաբույժը նոյնպէս հաստատում է՝ օտարերկրացիները հոսքը վիրահատութեան միջամտութիւնների համար մեր երկիր բոլոր տարիներին բաւականին մեծ է եղել՝ սովորաբար կազմում են այցելուների 30 տոկոսը: Նրանց կարելի է սպասել զարնան ամիսներից սկսած մինչեւ աշուն: Չնայած հիմա, կորոնավիրուսային հիւանդութեամբ պայմանաւորուած այցելուների թիւը զգալի նուազել է, բայց միեւնոյն է այցելուներ կան:

«Հիմնականում մեզ մօտ այցելում են Ռուսաստանից, Եւրոպական երկրներից եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներից: Եւրոպայից եւ ԱՄՆ-ից ճնշող մեծամասնութիւնն այստեղ ապրող հայ քաղաքացիներն են, իսկ Ռուսաստանը կատարում են, այսինքն՝ որոշում են գալ, թէ ոչ: Հիմնական գործողները նկարներ են ցոյց տալիս, ուզում են, որ նմանուէն իրենց երազած դէմքին, բայց ոչ մի դէմք ստանդարտ չի եւ իւրաքանչիւրը իր իւրայատկութիւնը ունի՝ կախուած դիմագծերից: Արտապլաստիկ հատուած, ճիշտ չի լինում, այդ ամէն ինչը թելադրում են դիմագծերը»,- ասաց վիրաբույժը:

Իսթետիկ վիրահատական միջամտութեան դիմող այցելուների հիմնական մասը կանայք են, տղամարդիկ դիմում են ականջի, դէմքի եւ այլ վիրահատութիւնների համար: Իսկ այցելուների 20 տոկոսը, ըստ մասնագետի, կազմում են այն քաղաքացիները, ովքեր գոհ չեն արտերկրում կամ այլ մասնագետի կողմից իրականացրած միջամտութեան արդիւնքներից եւ ուզում են շտկել այն: Ինչ վերաբերում է նրանց նախընտրած քթի ձեւն ունենալուն, բժշկի խօսքով՝ դա թելադրում են նաեւ թրենդները: «Մի ժամանակահատուածում երիտասարդ իրական սեռի ներկայացուցիչները զարկով մեզ մօտ ցանկանում էին ունենալ տիկնիկային քիթ, ցանկանում էին զգացուցիչ, որ որեւէ միջամտութիւն կայ, չափից աւելի փոքր եւ նուրբ քիթ էին ուզում: Բայց մենք իրենց հետ ակտիւ յարաբերութիւնների մէջ ենք, ամէն այցելուի հետ քննարկումներ ենք ունենում, որովհետեւ մի տարիքում մարդն այլ քիթ է ուզում, հասուն տարիքում արդէն ուրիշ: Դրա համար պէտք է հիւանդներին խորհուրդ տալ ոսկէ միջինը: Անում ենք նաեւ լուսանկարի մշակում, այսինքն՝

նից ունենք են, կամ այլ երկրների ներկայացուցիչներ, ովքեր ապրում են Ռուսաստանում: Հայաստանում եղանակն աւելի բարենպաստ է, նրանք էլ այստեղ այցելելով հաճելին եւ անհրաժեշտը համատեղում են միմեանց հետ եւ աւելի հետաքրքացնում իրենց այցը Հայաստան»,- նշեց մասնագետը:

Վիրաբույժի խօսքով՝ օտարերկրացիներին Հայաստանը գրաւում է իր պրոֆեսիոնալ մասնագէտներով եւ արժէքի մատչելիութեամբ: Ըստ նրա, այցելելով Հայաստան՝ պացիենտները սկզբում հաճելիօրէն զարմանում էին՝ տեսնելով գնային բաւականին մեծ տարբերութիւնը, սակայն հիմա բաւականին տեղեկացուած են: Ասում է՝ մի ժամանակ փորձ արուեստ օտարերկրացիների համար փոխել գնային քաղաքականութիւնը, այսինքն՝ այն աւելի բարձր դարձնել, բայց հասկացան, որ դա օպտիմալ մատչելիութեան մասին տեղեկանում են իրենց ծանօթներից, կամ ինչպէս բժիշկներն են ասում՝ հիւանդը հիւանդ է բերում:

«Իրենք մեզ դիմում են՝ այցելելով մեր բժշկական կեդրոն կամ դիմելիութիւնը իրականացնելու է նաեւ հեռախօսի միջոցով, բացի դրանից հիւանդները հեշտ են գտնում մեր անձնական կոնտակտները: Նախապէս հեռահար խորհրդատուութիւն է իրականացվում, խորհրդակցում ենք իրենց հետ, գուցէ իրենք համեմատութիւն են տանում տարբեր մասնագէտների հետ եւ ընտրում են:

համակարգչի միջոցով ձեւափոխում ենք քիթը, եւ այցելուները կարողանում է պատկերացնել, թէ ինչ տեսք կ'ունենայ իր քիթը վիրահատութիւնից հետ: Բայց դա մենք անում ենք, երբ վստահ ենք, որ դիմողը մեր յաճախորդն է»:

Քթի պլաստիկ վիրահատութեան համար այցելուները անցնում են համապատասխան հետազոտութիւնները, հիմա նաեւ պայմանաւորուած քովիդ-19-ով մինչ վիրահատութեան օրը նշանակելը թեստաւորում են: Բժշկի խօսքով՝ դիմողները պէտք է ազնիւ լինեն եւ իրենք էլ յայտնեն այն հիւանդութիւնները, որոնք ունեն, որպէսզի վիրահատութեան ժամանակ կեանքին սպառնացող վտանգ չլինի: Վիրահատութեան յաջորդ օրը պացիենտները դուրս են գրում, օտարերկրեայ քաղաքացիները բժիշկներ հսկողութեան տակ պէտք է մնան երեք շաբաթ, վիրահատական վէրքերի ապաքինումից յետոյ նրանք կարող են ազատ ճամբորդել:

Բազմամեայ վիրաբույժը շեշտում է՝ պլաստիկ վիրաբույժների միջամտութեանը դիմելուց առաջ շատ կարեւոր է հաշուի առնել մասնագէտի կատարած աշխատանքը, որոշակի ժամանակահատուածում իրականացրած գործունէութիւնը: Ասում է՝ հայ մասնագէտները օտարերկրացիների շրջանում բաւականին պահանջուած են եւ ունեն իրենց դիրքն ու տեղը:

Յ.Գ. Ի դէպ, ռուսական շանսոնի կատարող Լիւբով Ուսպենսկայան վերջերս իր հարցազրոյցներից մէկում պատմել էր, որ դատերն անհրաժեշտ պլաստիկ վիրահատութիւնն արել են հայաստանցի վիրաբույժները:

Սերժ Սարգսեանի Թիմը

Շարունակուած էջ 2-էն

դամ է, միջազգային հարթակներում կապեր ունի եւ այժմ՝ խորհրդարան անցնելուց յետոյ, ամէն կերպ փորձ է արուելու իշխանութիւններին ռուսամէտ ներկայացնել, եւ չի իջնուել, որ հենց Սերժ Սարգսեանի օրօք կնքուեց Եւրամիութեան հետ խորը եւ համապարփակ գործընկերութեան համաձայնագիրը, իսկ այս իշխանութիւնը այն նոյնիսկ պատշաճ կերպով չի իմպլեմենտացնում:

Ռուսական հարթակում, ամենայն հաւանականութեամբ, ակտիւ կ'աշխատի Ռոբերտ Քոչարեանի ղեկավարած դաշինքը եւ անձամբ Ռոբերտ Քոչարեանը: Վերջինս իր տուած բազմաթիւ հարցազրոյցներում բազմիցս յայտարարել է, որ ինքը պէտք է գայ իշխանութեան, որ հայ-ռուսական յարաբերութիւնները զարգանան, իսկ այս իշխանութիւններն արեւմտամէտ ու սորոսական են:

Անկասկած, թէ՛ եւրոպական եւ թէ՛ ռուսական հարթակներում գործող իշխանութիւնները մեծ անելիքներ ունեն: Եւ այդ անելիքների թւում առաջին հերթին միջխորհրդարանական ձեւաչափերում պրոֆեսիոնալներին ընդգրկելն է, Ռուսաստանում՝ Հայաստանի ու ՀՀ իշխանութիւնների օգտին աշխատող պրոֆեսիոնալ լրբբիտական կազմակերպութիւններ ստեղծելն է, քանի որ հենց նման կազմակերպութիւնների աշխատանքի շնորհիւ է, որ Ատրպէյճանն ու Թուրքիան այս տարիների ընթացքում ռուսական քաղաքական վերնախաւում ու հասարակական տրամադրութիւններում կարողացել են յստակ պրոպագանդային անակազմ ղերքորոշում ձեւաւորել:

«ԵՐԵՒԱՆ ԼՈՒՐ»

St. Gregory Armenian Saturday School

BACK TO SCHOOL

~ FALL SEASON ~

<p>Registration August 28, 2021 September 11, 2021</p> <p>School Resumes September 11, 2021 10am - 12:45pm</p> <p>Annual Tuition \$495</p>	<p>Everyone ages 5-12 at any level are welcome!</p> <p>Subjects taught include:</p> <ul style="list-style-type: none"> - Armenian Language - Armenian History - Armenian Culture & Events - Music and more...
---	---

For more information contact us:

626.449.1523
stgregorysaturdayschool@gmail.com

2215 E Colorado Blvd.
Pasadena, CA 91107

Լոզանի դաշնագիրին Եզրակացութիւնը

Շարունակուած էջ 11-էն

րարութիւն տալ հայկական բաղ-
ձանքներուն: Եւ իրաւունք ունէր
Լորտ Քըրքըն խորհրդաժողովին
մէջ դիմելու թուրքերուն ըսելով.
«Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը
մեզի կը նայի եւ կը սպասէ, որ
դուք բաւարարութիւն տաք հայե-
րուն»: Սակայն իսմէթ փաշան
պատասխանեց. «Քաղաքակիրթ աշ-
խարհը աւելի շատ մեզի կը նայի,
որովհետեւ դուք էք, որ անվերջ
խոստումներ տուած էք հայերուն,
իսկ մենք որեւէ խոստում տուած
չենք»:

Բացի մեզմէ, մեր բարեկամ-
ներն ալ դիմումներ կ'ընէին զանա-
զան ուղղութեամբ, եւ անոնց տպա-
ւորութիւնն ալ նոյնն է, ինչ որ եւ
մերը: Ամէնուրեք կը լսէինք հա-
մակրական խօսքեր, բայց չէինք
տեսներ թուրքերուն վրայ ազդելու
որեւէ գործնական միջոց»:

Հետաքրքրական է յիշել, որ
Լոզանի դաշնագիրէն առաջ, Ֆրանս-
սայի վարչապետ Փուանքարէ Սե-
րի դաշնագիրը ստորագրողները
կը մեղադրէր անոր համար, որ
անոնք «Թուրքիոյ հետ չափէն
դուրս տեսականօրէն են բանակ-
ցած» եւ իրենք «չեն կրնար յարու-
թիւն տալ Սեւրի դաշնագիրին»:
Այսինքն՝ դաշնակիրներ սիրալո-
ժար էին դրժել իրենց պարտաւո-
րութիւնները՝ Լոզանի ժողովէն իսկ
առաջ:

Հայերու մասին քանի մը ան-

գամ խօսակցութիւններէ ետք, վեր-
ջինը տեղի ունեցաւ 4 Յունիս
1923-ին: 17 Յունիսին արդէն ձե-
ւաւորուած էր Թուրքիոյ ժամանա-
կակից քարտէզը՝ իր ակնյայտ իւ-
րացումներով: Եւ ապա՝ 24 Յունի-
սին խորհրդաժողովին սրահը դա-
տարկուեցաւ՝ հայոց համար յու-
ղարկաւորներու դաժան դէմ քերով
եւ Հայաստանի համար մուսլ Տե-
ուանկարով: Մինչ Թուրքիա կը
յոխորտար դիւանագիտական իր
նոր նուաճումով, որուն յաճախ
անվերապահօրէն գորակցեցան եր-
բեմնի թշնամիները անոր...:
Բզբտուած էր երազը հայոց...:

Տարիներ ետք, անգամ մը եւս
հրապարակուեցաւ հայոց իրաւունք-
ներու պարագան, երբ Խ. Հայաս-
տանն ու սփիւռ. քահայութիւնը, Յե-
ղասպանութենէն կազդուրուած,
բարձրացուցին ազգային բռնախլ-
եալ իրաւունքներու պահանջը: Աւե-
լի ուշ, այս անգամ գինեալ պայքա-
րով, Լոզանի դաշնագիրին անար-
դար որոշումները անգամ մը եւս
հետաքրքրեց աշխարհը, քանզի շա-
տերու համար եթէ ի սպառ վերջա-
ցած էր հայը, սակայն հայկական
պետականութեամբ եւ աշխարհաց-
րիւ գաղութներով դեռ գոյատեւող
գոյութիւն է ան անկասկած:

Լոզանի խորհրդաժողովին
եզրակացութիւնը հետեւեալն է.
հակառակ դաշնագիրներու, ժո-
ղովուրդը պիտի վճռէ իր երթը,
ա՛զգը պիտի որոշէ իր ճանա-
պարհը:

Արեւմտեան Թեմի Sound Of Children

Շարունակուած էջ 13-էն

ւաքական աշխատանքով, միասնա-
կան սիրով եւ կամքով, հաւատքի
նաեւ տոկունութեամբ եւ եռան-
դով, մենք ուր էլ որ լինենք մեր
հայացքը դէպի Հայաստան եւ դէպի
Սուրբ Էջմիածին ուղղելով պէտք է
պահենք մեր ազգային ինքնու-
թիւնը եւ մեր քրիստոնէական նկա-
րագիրը: Մեր աղօթքն է, որ Աստ-
ուած պահէ, պահպանէ մեր ազգը,
մեր հայրենիքը եւ մանաւանդ մեր
ժողովուրդը:

Մենք բարի սովորութիւն ենք
ունեցած, առաւօտները մեր երե-
խաներու հետ միասին աղօթք ասե-
լու: Միւրեւի փոքրիկներ, ուզում
եմ, որ այս պահուն, ինչպէս որ
ամէն առաւօտ, հիմա էլ կրկնէք
աղօթքի այս գեղեցիկ բառերը՝ ձեր
ծնողներու եւ աշխարհի խաղաղու-
թեան համար, ուստի միասնաբար
բարձր ձայնով, որպէսզի Աստուած
լսէ ձեր աղօթքի ձայնը:


Աստուած իմ, լսիր իմ աղօթ-
քը,
Պահիր, պահպանիր իմ ծնող-
ներուն, իմ հարազատներուն,
Խաղաղութիւն շնորհիր հա-
մայն աշխարհին,
Խաղաղութիւն՝ Մայր Հայաս-
տանին,
Բարգաւաճ կեանք՝ մեր ժողո-
վուրդին:
Պահիր, պահպանիր եւ օրհնիր
մեր ուսուցիչներուն,
Բոլոր ծառայողներուն, որ-
պէսզի ունենան ուժ եւ եռանդ,

Հաւատքի գորութիւն, մեզ
առաջնորդելու համար՝ դէպի
Յոյսի եւ լոյսի նաւահան-
գիստ:

Ապա Սրբազան Հայրը իր
խօսքն աւարտեց՝ մաղթելով բոլոր-
րին ուժ, կորով եւ անսպառ նուի-
րում՝ մանուկներու հայեցի դաստ-
իարակման այս սուրբ գործին
մէջ»:

23 Յունիս, 2021 թ, կէսօրին՝
Առաջնորդարանի «Գալայճեան»
սրահին մէջ, տեղի ունեցաւ Արեւմտ-
եան Թեմի հովանու ներքոյ գործող
Sound of Children ամառնային ճամ-
բարի փակման հանդիսութիւնը:
Հանդիսութեան ընթացքին ճամ-
բարի երեխաները բեմադրեցին
«Ալլադին» հեքիաթային ներկա-
յացումը: Ապա Մայր Տաճարի հո-
գեւոր հովիւ՝ Տ. Խաթակ ԲՆՆՅ.
Շահպագեանը ընթերցեց եւ ճամ-
բարի տնօրինութեանը յանձնեց
Արեւմտեան Թեմի Բարեխնամ
Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք.
Տէրտէրեանի օրհնութեան եւ գնա-
հատանքի գիրը: Հանդիսութեան
աւարտին իր սրտի խօսքը ներկա-
ներուն փոխանցեց նաեւ հիւրաբար
այդ օրերուն Արեւմտեան Թեմ
այցելութիւն տուած՝ Մայր Աթոռի
Ս. Էջմիածնի Հայորդաց Տներու
հոգեւոր տեսուչ՝ Տ. Մղաքիա
վրդ. Ամիրեանը, որմէ յետոյ սոնա-
կան յայտագիրը փակուեցաւ «Պահ-
պանիչ» եւ «Հայր մեր» աղօթքնե-
րով:
Դիւան Առաջնորդարանի

**Լիբանանի Հայութեան
Քուէն**
2018 ին եւ յառաջիկայ
ընտրութիւններուն
Կը ներկայացնէ՝
Իրաւարան Ռուբէն Աւշարեան



Չինգչաբթի, Օգոստոս 12, 2021
երեկոյեան ժամը 7:30 ին
ԹՄՄԻ Պէշկէթուրեան Կեդրոնին մէջ,
1901 N Allen Ave , Altadena

www.massispost.com

AAPI BENEFIT CONCERT: VOICES
AAPI 公益音樂會: 團結之聲
in collaboration with
Chinese Chamber of Commerce
of Los Angeles
美國洛杉磯(漢省)中華總商會
Uniting People of All Colors, Cultures and Religions
Dedicated to anti-Asian hate, the Armenian Genocide, the Holocaust and Slavery



FEATURING ARTISTS



DMITRY RACHEVSKY
TRUMPET ARTIST - PIANO



YEN YEN HUANG
PIANIST



CELIA LIU
PIA YIYI, QIGONG



Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net
(626) 797-7680

ԱՄՆ-ի Հաւաքականը Տիրացաւ «Ոսկի Գաւաթին»



Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցած ՔՈՆ-ԲԱ-ԲԱՖԻ (Հիւսիսային եւ կեդրոնական ամերիկաներու ու Քարիպեան կղզիներու Ֆետերասիոն) երկիրներու «Ոսկի Գաւաթ» մրցաշարի արտօյեան դարձաւ Ամերիկայի հաւաքականը:

Հաս վեկասի մէջ տեղի ունեցած եզրափակիչ խաղին ամերիկացիները լրացուցիչ ժամանակին նուազագոյն հաշուով յաղթեցին Մեքսիքայի ազգային խումբին: Միակ կողմ 117-րդ վայրկեանին նշանակեց Աթլանթա Եունայթեթրտի 24-ամեայ պաշտպան Մայլա Ռոպինսոն:

ԱՄՆ-ի հաւաքականը 7-րդ անգամ է որ կը տիրանար «Ոսկի Գաւաթին»: Մեքսիքայի հաւաքականը, Գաւաթը նուաճած է 11 անգամ:

Թոքիո-2020. Կարէն Խաչանով. Մինչեւ Այս Նոյնիսկ Չէի Կարող Երագել, Որ Արծաթէ Մետալ Կը Նուաճեմ Ողիմպիական Խաղին

Ռուսաստանի ներկայացուցիչ Կարէն Խաչանովն ձաբոնի մալրաքաղաք Թոքիոյ մէջ ընթացող 32-րդ ամառային Ողիմպիական խաղերու թենիսի տղամարդկանց մրցաշարի դարձաւ փոխախոյան տիրանալով արծաթ մետալի: Եզրափակիչին 25-ամեայ հայ թենիսիստը 3:6, 1:6 հաշուով պարտուեցաւ գերմանացի Ալեքսանդր Զվերեւին:



«Մրցակիցս շատ լաւն էր այսօր: Այնպիսի տպաւորութիւն էր, որ ան պարզապէս չէր սխալուեր: Ողիմպիական խաղերը նոյնքան կարեւոր են ինձ համար, որքան Մեծ սաղաւարտի մրցաշարերը: Սակայն Զվերեւը պարզապէս շատ լաւն էր այսօր: Սկիզբէն մինչեւ վերջ ան կատարեց զարմանալի հանդիպում: Մին չեւ այս նոյնիսկ երազել չէի կրնար, որ արծաթէ մետալ կը նուաճեմ Ողիմպիական խաղերուն: Իհարկէ, կը ցանկայի դառնալ ոսկէ մետալակիր: Կը փորձեմ այդ ընել յաջորդ Ողիմպիական խաղերուն: Պարտութիւնը կը թողու իր հետքը, ես յուսահատուած եմ, սակայն այդ սպորտի մէկ մասն է: Հնարաւոր չէ պարտուիլ ու ըսել, որ ամէն բան բնական է», խաղի աւարտին ըսաւ Կարէն Խաչանով:

Թոքիո-2020. Իտալացի Աթլետի Անակնկալ Յաղթանակը 100 Մետր Վազքի Ընթացքին

Ճափոնի մայրաքաղաք Թոքիոյ մէջ շարունակուող 32-րդ ամառային Ողիմպիական խաղերու աթլետիք մրցաշարի տղամարդկանց 100 մետր վազքի ընթացքին արտօյեանի տիրոջը նուաճեց իտալացի Լամոնտ Մարսել Զեյկոբը: 26-ամեայ աթլետը արձանագրեց 9.80 վայրկեան արդիւնք եւ սահմանեց նաեւ անձնական մրցանիչ: Իր մարզական կեանքի ընթացքին Լամոնտ Մարսել Զեյկոբը մեծ մրցաշարերուն յաղթած էր միայն 2021թ. Եւրոպայի առաջնութեան 60 մետր վազքի ընթացքին:



Ողիմպիական փոխախոյան դարձաւ ամերիկացի Ֆրետ Կերլին, իսկ պրոնզէ մետալ նուաճեց գանատացի Անդրէ Դէ Գրասը: Յիշեցնենք, որ 100 մետր վազքի ողիմպիական մրցանիչը 9.63 է, իսկ աշխարհի մրցանիչը՝ 9.58:

Հայաստան Տիրացաւ Երկու Արծաթ

Շարունակուած էջ 1-էն

քով կը մասնակցէր վճռորոշ գօտեմարտին:

Հայաստանի հաւաքականի ոսկիի համար պայքարի միւս յաւակնորդը՝ 109 քիլոկրամ ծանրութեան մէջ Միմոն Մարտիրոսեանը երկամարտի 423 քիլոկրամով երկրորդ տեղն էր: Ոսկէ մետալ նուաճող Ուզպեքիստանը ներկայացնող Աքպար ձուրաբեկը Մարտիրոսեանը գերազանցեց 7 քիլոկրամով:

63 քիլոկրամ քաշային կարգին բռնցքամարտիկ Յովհաննէս Բաշկովը քառորդ եզրափակիչին ընդհանուր 5:0 հաշիւով վստահ յաղթանակի հասաւ Ուզպեքիստանի ներկայացուցիչ՝ Էլնուր Ապտուրաչիմովի հետ մենամարտին՝ անցնելով կիսաեզրափակիչ: Հայ մարզիկը առնուազն պրոնզէ մետալ ապահովեց, իսկ երեք օր ետք Միացեալ Նահանգները ներկայացնող Քիլշուան Տեւիսի հետ կայանալիք մենամարտին կը փորձէ յաւակնել ոսկէ մետալին:


Հայաստանը ներկայացնող մարզիկներէն այսօր առաջինը պայքարի մէջ մտաւ հեռացատկորդ Լեւոն Աղասեան, ան արձանագրեց 16.42 մետր, որ բաւարար չէր եզրափակիչ անցնելու համար, Աղասեան աւարտեց ելուցիւնները Թոքիո-2020-ին:

Յունահռոմէական ոճի ըմբշամարտիկ Կարէն Ասլանեան իր առաջին գօտեմարտին յաղթանակի հասաւ, սակայն քառորդ եզրափակիչին պարտուեցաւ Եգիպտոսը ներկայացնող Մուհամէտ Իպրահիմ Ալ Սալիտէն: Հայ մասնագէտները կը պնդեն, որ Ասլանեան պարտութիւն կրեց մրցավարական սխալի պատճառով:

Ըմբշամարտիկ Կարապետ Չալեան պրոնզէ մետալի համար գօտեմարտին գիջեցաւ Ատրպէյճանը ներկայացնող մարզիկին:

Հայաստանի առաջին Ողիմպիական մետալը երէկ յենացատկին մէջ նուաճեց մարմնամարզիկ Արթուր Դաւթեանը, ան երրորդն էր:

Թոքիո Ողիմպիական խաղերուն Հայաստան այժմ ունի երկու արծաթեայ եւ մէկ պրոնզեայ մետալներ: Այս ցուցանիշով ընդհանուր ցուցակին 58-րդն է:



Թոքիո-2020. Եռացատկի Ախոյեանուհին Յաղթեց 26 Տարի Պահպանուած Աշխարհի Մրցանիշով

Ճաբոնի մայրաքաղաք Թոքիոյ մէջ ընթացող 32-րդ ամառային Ողիմպիական խաղերու աթլետիքի մրցաշարի կանանց եռացատկի ընթացքին ոսկէ մետալակիր դարձաւ վենեզուէլացի Եուլիմար Ռոխասը, որ սահմանեց աշխարհի մրցանիշ: Անոր արդիւնքն էր 15,67 մետր: Նախորդ մրցանիշը կը պատկանէր ուքրաինացի Ինեսա Կրավցեյին: 1995-ին ան ցատկած էր 15,50 մետր:



Այս մրցաձեւին արծաթէ մետալակիր դարձաւ փորթուգալացի Պատրիսիա Մամոնան, իսկ Սպանիայի ներկայացուցիչ Անա Պելետեյրոն գրաւեց երրորդ տեղը:

Թոքիո-2020. Ֆուտպոլի Մրցաշարի Աւարտականի Հասած Ձոյգերը

Թոքիոյի Ողիմպիական խաղերուն յայտնի դարձան ֆուտպոլի մրցաշարի աւարտական զոյգերը:

Տղոց մրցաշարին եզրափակիչի ուղեգրի ստացաւ Պրագիլի հաւաքականը, որ կիսաեզրափակիչ մրցումին փենալիթիներով պարտութեան մատնեց Մեքսիքային: Կիսաեզրափակիչ միւս խաղին Սպանիա 1:0 արդիւնքով յաղթեց Ճափոնին: Այսպիսով, ոսկի մետալի համար կը պայքարին Պրագիլի եւ Սպանիոյ հաւաքականները:

Կանանց մրցաշարի կիսաեզրափակիչի Աշխարհի արտօյեան ԱՄՆ-ի հաւաքականը անակնկալ պարտութիւն կրեց Գանատայի դէմ՝ 1:0 արդիւնքով: Նոյնանման արդիւնքով Շուէտ պարտութեան մատնեց Աւստրալիային:

Կանանց ոսկի մետալին համար կը մրցին Գանատա եւ Շուէտ:

